

689

Լ. ԿԱԳԱՆՈՎԻԶ
80

ՃԱՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ ԽVIII
ՀԱՄԱԳՈՒՐԱԲՈՒՐ

338.98(47)

4-12


Գ Ե Տ Հ Ր Ա Տ

ՔԱՂԱՔՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

2802-10

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԴՆԵՐԻ, ՄԻԱՅՆ





338-98(42) L. ԿԱԳԱՆՈՎԻԶ
4-12

ՃԱՐ
ՀԱՄԿ_(Բ)Կ XVIII
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

1939 թ. մարտի 14-ին

689
410728

ՊԵՏՀԱՆՈՒՑ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

3d.181

16 MAY 2013

Ընկերներ, մենք այստեղ լսեցինք ընկեր Ստալինի զե-
կուցումը՝ մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի
գործունեյության մասին։ Մեզանից յուրաքանչյուրը հա-
կանում և դգում ե, վոր դա վոչ թե սոսկ հաշվետվություն
ե, դա մի ծրագիր ե, վորը միլիոնավոր մարդկանց մորի-
թղացիայի յե յենթարկում նոր, մեծ գործերի համար։
Այդ հաշվետվությունը հուզում և վարակում ե պաֆոսի,
յեռանդի, ե՛լ ավելի շատ աշխատելու, ի փասս սոցիալիզմի
աշխատելու նոր հորդումով։

Եթե խորհրդային իշխանության առաջին ժամանա-
կաշրջանում մեր կուսակցության ամբողջ կյանքն ու գոր-
ծունեյությունը լցված եյին առավելապես քաղաքացիական
պատերազմի, խորհրդային իշխանության ամրապնդման
պաֆոսով, աղա հետազաժամանակաշրջաններում, ահա ար-
դեն 15 տարվա ընթացքում, մեր կուսակցության կյանքն ու
գործունեյությունը լցված ե սոցիալիզմի կառուցման պա-
ֆոսով։ Այդպիսի պաֆոսով են առկորդած մեր կուսակցու-
թյան կենտրոնի հաշվետվությունները։

Այս 15 տարվա ընթացքում հինգերորդ անգամն ե, վոր
կուսակցությունը և ամբողջ յերկրը լուսմ են ընկեր Ստա-
լինի զեկուցումը մեր կուսակցության կենտրոնի գործու-
նեյության մասին։ Այդ բոլոր զեկուցումների միջով կար-
միր թելի պես անցնում ե պայքարը հանուն սոցիալիզմի
Հաղթանակի մեր յերկրում։ Այդ պայքարի ընթացքը ներ-
կայացնում և վո՞չ միայն պատմական հետաքրքրություն։
Սոցիալիզմը մեր մոտ հաղթել է անդառնալիորեն, բայց սո-
ցիալիզմի հետազաժամանական կոմունիզմի նոր, բարձ-
րագույն Փաղին անցնելու համար մզվող պայքարը կպահան-
ջի գեռնս վոչ քիչ ջանքեր, յեռանդ և խնդիրների ահսական
ու քաղաքական ըմբռնում։

Մեր կուսակցության XIV համագումարում աված քա-



Կ310-91

3142

39

Л. КАГАНОВИЧ
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ ВКП(б)
Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

զաքական հաշվետվության մեջ ընկեր Ստալինը զարդացրեց և հիմնավորեց մեկ յերկրում սոցիալիզմի հաղթանակի թերթիան, ջախջախեց յերկրի ազգարիզացիայի արոցկիտական-զինովյելվական պլանը և ծավալեց սոցիալիզմի համար հարձակում գործելու գլխավոր գիծը:

Հարկավոր եր ունենալ հիրավի լենինյան հանճարեղ խորաթափանցություն, վորպեսզի լենինի նման, վորը գեռ 1903 թվին հանձինս մենչեվկների բացահայտեց բանվոր դասակարգի դավաճաններին, 1923-1924 և հետագա տարիներին՝ հնարավոր լիներ հանձինս տրոցիկոստների, զինովյելվականների, բուխարինականների բացահայտել մատնիչներին ու բանվոր դասակարգի թշնամիներին:

Մեր կուսակցության XV և XVI համագումարներում, բանվոր դասակարգի և կուսակցության ուժերի ամրապնդմանը գուգընթաց, կենտկոմի քաղաքական հաշվետվությունների մեջ արդեն դրվում է ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման, ժողովրդական տնտեսության մեջ կապիտալիստական տարրերի լիկվիդացիայի, խոկ այսուհետև կուլակության վորպես դասակարգի լիկվիդացիայի խնդիրը. համատարած կուլակիվացման, յերկրի խնդումտիբալիզացիայի քաղաքականության կենսագործման, բոլշևիկյան տեմպի ապահովման և առաջին հնգամյակը չորս տարում իրականացնելու խնդիրը:

Թեորիական խորը բովանդակությամբ, դեպի աշխատավորները տածվող մեծ սիրով, աշխատավորության թշնամիների նկատմամբ տածվող ատելությամբ ու արհամարհանքով, մեր հայրենիքի հզորությունն ամրապնդելու, այն հետամնաց, անկուլտուրական յերկրից առաջավոր կուլտուրական յերկրի վերածելու հեղափոխական բուռն տենչով եյին տողորված մեր կուսակցության կենտրոնական կոմիտեյի հաշվետվությունները—մեր մեծ առաջնորդ ընկեր Ստալինի գեկուցումները: (Բոլորը վոտիի յեն կանգնում: Բուռն, յերկարած ծափակարություններ, վորոնք վերածվում են ովացիայի՝ ի պատիվ ընկեր Ստալինի: «Ռուս» բացականչություններ):

Մեր կուսակցության XVII համագումարը կոչվել եր հաղթողների համագումար, վորովհետև այդ համագումա-

րում ամփոփվել ելին սոցիալիզմի համար մղված պայքարը արդյունքները, հաստատվեց, վոր սոցիալիզմը հաղթել և անդառնալիորեն: Կուսակցության XVII համագումարում կենտրոնական կոմիտեյի հաշվետվությունն ամփոփեց մեկ յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության լենինյան-սոտալինյան թեորիան գործնականում իրականացնելու մեջ արդյունքները:

Ընկեր Ստալինի գեկուցումից յերեսում և, վոր կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանն ամենալուրջ և ամենավնական ժամանակաշրջանն է մեր յերկրում սոցիալիզմի հաղթամակների պատմության մեջ: Իրոք, ընկերներ, խորհրդային իշխանության գոյության 21 տարվա ընթացքում մենք անցանք պրոլետարիատի քաղաքական իշխանության նվաճման ժամանակաշրջանը, քաղաքացիական պատերազմում ներքին հակառակապիտության և ինտերվենտների նկատմամբ մեզ տարած հաղթանակների ժամանակաշրջանը:

Այսուհետև մենք անցանք պրոլետարիատի քաղաքական իշխանության ներքո սոցիալիզմի անտեսական բազայի, սոցիալիզմի հիմքի ստեղծման ժամանակաշրջանը: Այդ ժամանակաշրջանում համաշխարհային բուրժուազիան հույս եր զրել մեկ կողմից այն բանի վրա, թե խորհրդային իշխանությանը կիբերասերվի սովորական բուրժուական իշխանության և, մյուս կողմից, սոցիալիզմի կառուցման գործի անտեսական ձևախոշման վրա: Այդ հաշիվները, ինչպես հայտնի յեն, լիակատար խորտակում կրեցին:

Մեր կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած վերջին հինգ տարվա ընթացքում համորդիկով, վոր սոցիալիզմը մեր յերկրում անդառնալիորեն հաղթել և, կապիտալիստական շրջապատումը, առանձնապես նրա առաջապահ Փաշիստական ջոկատն անցավ սոցիալիստական տնտեսությունը, մեր սոցիալիստական պետության հզորությունը ներսից իր դործակալների-լրտեսների միջոցով քայլայելու նոր տակտիկայի: Տրոցիկոստական-բուրժուարինական գինովյեկական աղբակույտին պատկանող մնասարարների, լրտեսների ու դիմերսանաների, մեր խորհրդային հասարակության տականքների դատավարությունները ցույց տվին,

Հեր հենց այս հինգ տարվա ընթացքում համաշխարհային բուրժուազիան և նրա զործակալները, բուրժուազիային հասուն ամբողջ ուխտագրժությամբ, իրենց հույսը դրել ելին խորհրդային պետությունը ներսից պայթեցնելու վրա:

Այդ ժամանակաշրջանում մենք դործ ունեցինք վոչ թե բացահայտ պատերազմի հետ, վոչ թե սովորական հետախույզների հետ, վորոնք ուղարկվում են ոտարերկրյա պետությունների կողմից և չդիման յերկրի լեզուն ու կենցաղը, այլ մենք դործ ունեցինք ամենավտանդավոր լրտեսների, վնասարարների ու դիմիւրանաների հետ: Դրանք այնպիսի դիմիւրանաներ, լրտեսներ եյին, վորոնք ծանոթ եյին մեր պայմաններին, փորձված եյին պայքարի դավաճանական պրիունների մեջ և կարողանում եյին ուխտագրժորեն դիմակալորդել: Այդ լրտեսներն ունեցին իրենց կազմակերպությունը և վնաս եյին հացնում վորտեղ կարողանում եյին:

Այստեղ մենք պետք են ասենք, վոր մեր պետությունը, նրա գոյությունն իսկ, կենթարկվելու մեծագույն վտանգի, յեթե Ստալինյան կենտրոնական կոմիտեն համարձակութեն չբացահայտեր լրտեսական-դիմիւրսիոն թշնամական դործունեցության արմատները և բոլշևիկյան ամենայն վճռականությամբ մեր կուսակցությունն ու յերկրության չմաքրեր այդ գարշանքից, յեթե հենց այդ ժամանակաշրջանում յերեան չբար մեր կուսակցության ու նրա կենտրոնական կոմիտեի Ստալինյան զեկավարության մեծ ուժը: (Բուռն ծափահարություններ):

Ենք այն հիմնական հետեւությունը, վոր մենք պետք են անենք մեր կուսակցության կենտրոնական կոմիտեի հաշվետվությունից, ընկեր Ստալինի զեկուցումից—դա այն է, վոր այդ լուրջ, վճռական ժամանակաշրջանում կուսակցությունը, նրա կենտրոնը, պատվով պաշտպանեցին, սոցիալիստիկ նվաճումները թշնամիները թշնամիների դավերից: Մենք հաղթեցինք, վորովհետեւ մենք ընթանում եյինք մեծ կենինի ուղիով, գլխովին ջախչախերով թշնամիներին, վորովհետեւ կուսակցությունն ուներ կենտրոմի ճիշտ զեկավարությունը, վորովհետեւ ուղին նրա բոլոր վորություններով ու դժվարություններով, մատնանշում, մաքրում և լուսավորում եր մեր մեծ զեկակալ ընկեր Ստալինը, նոր ուղիներ գծելով թերթայի

մեջ և պրակտիկայի մեջ: (Բուռն ովացիա ի պատիվ ընկեր Ստալինի: Բնդրբ վոտիի յեն կանգնում, բացականչություններ՝ «Ռուա», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»):

Մեր կուսակցության ԽVIII համագումարը պատմական մեծ ուղենիչ և մեր յերկրի կյանքում, ասենք և վո՛չ միայն մեր յերկրի, և հենց այդ պատճառով ել ամբողջ յերկրը հակայական հոգիչ հետաքրքրությամբ սպասում եր կուսակցության ԽVIII համագումարին:

Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը բացահայտեց, թե անտեսական ու քաղաքական ինչպիսի ցնցումներ ե ապրել կապիտալիստական աշխարհն այդ ժամանակաշրջանում, թե այժմ կապիտալիստական որգանիզմն ինչպես ե տեղդում, չնայած նրա առերևույթ արտաքին կայտառությանը, Միևնույն ժամանակ ընկեր Ստալինը ցույց տվեց մեր յերկրում սոցիալիզմի մեծ հաղթանակների պատկերը, մեր հայրենիքի աճումն ու ծաղկումը և նշեց մեր արտաքին քաղաքականության զիծն ու յերկրի ներսում կոմունիզմի հաղթանակի համար պայքարելու ծրագիրը:

Ամբողջ կուսակցությունը, մեր ամբողջ ժողովուրդը չեն կարող չվողջունել կենտրոմի միջազգային քաղաքականության դիմը: Մեծ կուսակցությունը վարում և կայուն, մեծ Սորհրդային պետությանը վայել միջազգային քաղաքականություն:

Ժողովուրդը չի կարող գոհ չլինել այն բանից, վոր մեր կուսակցության և նրա կենտրոմի դիմը, խաղաղության անհողողությունը քաղաքականությունը, դիմեկտիկորեն զուգակցում և մեր յերկրի պաշտպանուակությունն ամրապնդելու քաղաքականության ու պրակտիկայի հետ: (Յերկարան ծափահարություններ):

Ընկեր Ստալինի հաշվետվությունը նոր բարձրության հասցրեց Սորհրդային յերկրի արժանապատվությունը: Նա բոլոր թշնամիներին, ինչպիսի դիմակով ել քողարկված լինեն նրանք, ցույց տվեց, վոր մեր կուսակցության իմաստուն աշխատ ամբողջովին տեսնում և պատերազմի բացահայտ ու թաղնված պրովոկատորներին, վոր այս տրիբունից իմաստուն խօսքերով նախապես մերկացնում և նախազդուշացնում են նրանց: Նախազդուշացումը հակիրճ է: Մենք վա-

բում ենք խաղաղության քաղաքականություն, բայց «մենք չենք վախենում աղբեսորների սպառնալիքներից և պատրաստ ենք կրկնակի հարվածով պատասխանելու պատերազմի հրձիքների հարվածին, վորոնք փորձում են խախտել խորհրդային սահմանների անձեռնմխելիությունը»: (Բուռն, յերկարած ծափահարություններ): Իսկ թե դա ինչ է նշանակում, թող ազգեսորները հարցնեն սամուրայներից, վորոնք ունեն Խասանի փորձը, վորոնց մասին կարելի յէ ասել մի գեներալի մասին յեղած հին առածով: Առածը հետևյալն է. «Մալբրուկն արշավանքի պատրաստվեց», և ապա գալիս է Համապատասխան հանդը... (ծիծաղ, բարձրաձայն ծափահարություններ): Վորպեսզի թյուրիմացություններ ու սխալ մեկնարանություններ չլինեն, յետ բացատրեմ. այդ նշանակում է, վոր Մալբրուկն արշավանքի պատրաստվեց և մեռավ սուամոքսի խանգարումից (ծիծաղ, ծափահարություններ): Այդպես պատահեց յաղոնական այն սովաների հետ, վորոնք, ինչոքս այդ յերեսում է լինելու վորոշիւմի ճառից, մահից հետո թողել են իրենց վորոշ գրանցումները: (Ծիծաղ):

Ընկեր Ստալին ասաց. «Պատերազմը նոր իրազերություն ստեղծեց յերկրների փոխհարաբերությունների մեջ: Նա այդ հարաբերությունների մեջ մտցրեց տաղնապի ու անվաստահության մթնոլորտ»: Իսկ ընկեր Ստալինի հաշվետվությունը մեծ վստահությամբ է լցնում վո'չ միայն մեր յերկրի աշխատավորության սրտերը, վստահություն այն բանում, վոր աշխարհում կա խաղաղության մեկ խոկական դինամիզ պատվար—դա մեր մեծ, հզոր, անպարտելի նորհրդային Միությունն է: (Բուռն ծափահարություններ):

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈ- ՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Դաւք հիշում եք «Տնտեսավարների խնդիրների մասին» 1931 թվին արտառանած ճառի մեջ ընկեր Ստալինի մեծ խոսքերը Հետամնացների մասին, վորոնց խիսում են, վորտեղ նա հակիրճ բառերով պատկերեց հին ցարական Ռու-

թաստանի միջաղղային քաղաքականության ամբողջ տիտոր պատմությունը, թե ո՞վ և ի՞նչպես եր խիսում հին, հետամնաց Ռուսաստանին: Կենտկոմը, Կառավարությունը և ընկեր Ստալինն անդուլ կերպով աշխատեցին, վորպեսզի միկիդացիայի յենթարկեն հետամնացությունը, ստեղծեն ուժ, հզորություն—բանակ, ստեղծեն այնպիսի հզոր ժողովրդական անտեսություն, վորը Խորհրդային պետությանն ապահովի բլոկադի անակնկալներից, վորը ստեղծի անտեսական անկախություն և հնարավորություն տա բանակը զինելու այն ամենով, ինչ անհրաժեշտ է հաղթական պայքարի համար:

Յեկ մենք, ընկերներ, այսոր կարող ենք ասել, վոր այդ ուժը ստեղծված է: Այդ դուք տեսնում եք ընկեր Ստալինի զեկուցումից և ընկեր Վորոշիլովի ճառից: Խորհրդային Միության տնտեսական հզորությունը վճռական գործոն և հանդիսանում հայրենիքի պաշտպանության և խաղաղության համար պայքարելու գործում: Հաշվետու ժամանակաշրջանում Խորհրդային պետությունը վիթխարի քայլ և կատարել դեպի առաջ՝ սոցիալիստական շինարարության ըոլոր բնագավառներում,—և՝ գյուղատնտեսության, կոլեկտիվացման բնագավառում, և՝ արդյունաբերության ու կուլտուրայի բնագավառում, և՝ արդյաւնաբերության ամենակարեւը մասի բնագավառում, վորի մասին բարմիցս ասել են լենինն ու Ստալինը, թե դա ժողովրդական անտեսության հիմնական բաղան է, առանց վորի անհնարին և վերապինել, վերակառուցել յերկիրը,—ծանր արդյունաբերության բնագավառում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵԿ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ
ԿՈՂՄԻՑ ԴԻՎԱԾ ԽԵԴՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ—ՏԵՏԵՍԱԳԵՑ
ԱՌԱՋ ԱՆՑՆԵԼ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ

Ընկեր Ստալինի հաշվետվությունից յերեսում է, վոր Խորհրդային Միությունը XVII-ից մինչև XVIII համագումարը տանող ժամանակաշրջանում նոր խոչոր հաջողություններ և ձեռք բերել անտեսական շինարարության ասպարեզում:

Արդեն կուսակցության XVII համագումարում արձանա-

դրվեց, զոր մեր յերկիրը գարձել ե տնտեսապես անկախ յերկիր։ XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում այդ անկախությունն ե'լ ավելի ուժեղացավ։

Փաստորեն ստեղծված ե ալյումինի նոր հղոր արդյունաբերություն, սինթետիկ կառուչուկի, արհեստական թելի, պլաստիկ մասսայի և այլ արդյունաբերություն։ Քարածիի արդյունաբերության մեջ յերկրորդ հնդամյակում Գլավուդովի գծով շահագործման են հանձնվել 145 հանքահոր՝ 74,6 միլիոն տոնն կարողությամբ, վորը կազմում է կարողության 1,5 անգամ աճ՝ համեմատած առաջին հնդամյակի հետ։ Նավթարդյունաբերության գծով շահագործման են հանձնվել 25 կրեկինդ և սկզբնական թորման 15 տրուքչառկա։ Սև մետալուրգիայի գծով յերկրորդ հնդամյակի ընթացքում շահագործման են հանձնվել 20 դոմենյան հնոց և 86 մարտենյան հնոց։ Գունավոր մետալուրգիայի գծով՝ Մերձբայաշյան կոմբինատը (մասամբ), Միջին-Ռուբայան պղնձի կոմբինատը (մասամբ), ավարտված ե Զելյարինակի ցինկի գործարանի, Սեվերնիկելի Յուժուրալնիկելի կառույցումը։ Այս աւրիների ընթացքում շահագործման են հանձնվել մեքենաշինության այնպիսի հսկաներ, ինչպես Ռւրալմաշը, Կրամատորսկի և այլ մեքենաշինական գործարանները։

Մանր արդյունաբերությունն այս հաշվետու ժամանակաշրջանում շարունակում եր զարգանալ արագ տեմպով։ Բավկական ե բերել ծանր արդյունաբերության արտադրանքի վերաբերյալ մի քանի թվեր՝ նախկին Մանր արդյունաբերության ժողկոմատի ծավալով, ներառյալ Մեքենաշինության ժողկոմատը—այժմ արդեն վոչ թե մեկ, այլ յերեք ժողկոմատ, Պաշտպանության արդյունաբերության ժողկոմատը—մեկ, այլ արդեն չորս ժողկոմատ և վեց ժողկոմատներ, վորոնք արդեն առանձնացել են վերջին Մանր Արդյունաբերության ժողկոմատից։ Մեկ ժողկոմատից առանձնացել են 13 ժողկոմատներ։ Հիմա կարող եք պատկերացնել, թե դա ինչպիսի, իրոք վոր «ծանր», ժողկոմատ եք։ (Ծիծաղ, ծափահարություններ)։

Մանր արդյունաբերությունն արտադրանքի աճ տալիս է 1933 թվի 15 և կես միլիարդ ուռվուց մինչև 42 և կես

միլիարդ ուռվուց 1938 թվին (1926—27 ա. անփոփոխ դներով), այսինքն յերկու և յերեք քառորդ անդամ, այն ժամանակ, յերբ մեր յերկրի ամբողջ խոչըր արդյունաբերությունն աճել է 2,4 անդամ։

Հարկ չկա խոսելու ծանր արդյունաբերության աճման նշանակության մասին։ Դուք գիտեք, թե դրան ինչպիսի նշանակություն եր տալիս ընկեր լենինը, ինչպես եր աճեցնում, բարձրացնում այն ընկեր Ստալինը։ Բայ ծանր արդյունաբերության առանձին ճյուղերի մենք ունենք հետեւյալ աճը։—կապարի ձուլումը 1938 թվին կաղմեց 1933 թվի համեմատությամբ 571,6 տոկոս, ցինկինը—506,1 տոկոս, ալյումինումի ձուլումը—1000 տոկոս, այսինքն՝ փաստորին ստեղծված ե նոր արդյունաբերություն, սև պղնձի ձուլումը հանքաքարից 1938 թվին կաղմեց 1933 թվի համեմատությամբ 255,9 տոկոս, ավտոմոբիլային պոկրիչկայի արտադրության գծով, վորոնք գծքախտաբար այժմ ել դեռ չեն բավականացնում, մանավանդ գյուղատնտեսության մեջ, և հաճախ դուք հայհոյում եք, դրա հետ միասին յերեւնի ասելով, թե՝ «անծծված» լինեն ավտոմոբիլի պոկրիչկաներ մատակարարողները» (ծիծաղ), —ահա այդ ավտոմոբիլային պոկրիչկաների գծով մենք 1938 թվին ունենք աճ 1933 թվի համեմատությամբ 566,7 տոկոսով։ (Ծափահարություններ)։

Պողպատի և պրոկատի գծով մենք այս ժամանակաշրջանում ունենք սոլիդ աճ—պողպատի գծով՝ 261,7 տոկոս, պրոկատի գծով՝ 263,8 տոկոս։ XVII համագումարում ընկեր Ստալինը ինոդեռ զրեց՝ լիկիվացիայի յենթարկել սև մետալուրգիայի հետ մնալը և ավելացնել պրոկատի ու պողպատի արտադրությունը։ Պրոկատի և պողպատի գծով մենք ունենք աճում ավելի քան յերկու և կես անգամ, իսկ չուգունի գծով մենք լրջորեն հետ ենք մնացել։ 1938 թվին մետալուրգիան չուգուն ե տվել 205,9 տոկոս՝ 1933 թվի ձուլման համեմատությամբ։ Այդ յերկու անգամից ավելի շատ ե, փոքր աճում չե, բայց, այնուամենայնիվ, մենք հետ ենք մնում, այն ել լուրջ կերպով։ Պատճառներ այսպես շատ կան։ և ընդհանուր, և հենց մետալուրգիաներից կախված, բայց այդ հետ մնալուն պետք ե վերջ առաջ այդ համար անդամ, այս ել լուրջ կերպով։

Ածիրի գծով մենք XVII և XVIII համադրումարների միջն ընկած ժամանակաշրջանում ունենք այսպիսի աճ—1933 թվին ածիրի հանույթը կազմեց 76,2 միլիոն տոնն, իսկ 1938 թվին՝ 132,9 միլիոն տոնն։ Այդպիսով, 1938 թ. հանույթը՝ 1933 թ. հանույթի համեմատությամբ, կազմեց 174,4 տոկոս։ Նաև ի հանույթը, դադի հետ միասին, այդ ժամանակաշրջանում աճեց համարյա մեկ ու կես անդամ (1938 թ. հանույթը կազմեց 1933 թ. հանույթի համեմատությամբ 142,8 տոկոս)։ Ավելի քան մեկ ու կես անդամ աճեց նավթի վերամշակումը (153,6 տոկոս)։

Ել ավելի մեծ չափով աճել է վճիռ նավթամթերքների արտադրությունը (բնողին—169,1 տոկոս՝ 1933 թ. համեմատությամբ, լիդրուին—295,8 տոկոս՝ 1933 թ. համեմատությամբ, կերոսին—164,9 տոկոս՝ 1933 թ. համեմատությամբ)։

Լուրջ կերպով աճել է մեքենաշինությունը։ Անման ունակետից առանձնապես աչքի յե ընկնում պաշտպանական արդյունաբերությունը։ Դա ցուցանիշ է այն բանի, թե ինչպես կուսակցությունը և անձմբ ընկեր Ստալինն ուշադրություն էն գարձնում յերկրի պաշտպանունակության ամբաղնդմանը։

Կուսակցության XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանում մենք գոյ միայն պահպանեցինք, այլ և բարձրացրինք նվաճված տեմպը։ Մինչդեռ XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանում, 1930-ից մինչև 1933 թիվը, համախառն արտադրությունը տարեկան միջին աճը նախկին Ծանր արդյունաբերության ժողկոմատի, Մեքենաշինության ժողկոմատի և Պաշտպանության արդյունաբերության ժողկոմատի կողմից ընդդրվելող ձեռնարկությունների շրջանակում 1933 թվին կազմեց 20,7 տոկոս, XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանում տարեկան միջին աճը կազմեց 22,4 տոկոս։ Յեթե հաջի առնենք, վոր ծանր արդյունաբերության արտադրանքի աճման յուրաքանչյուր տոկոսը կուսակցության XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանը կազմում էր 91 միլիոն ոուրլի, իսկ կուսակցության XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամա-

նակաշրջանում աճման յուրաքանչյուր տոկոսը կազմում է 155 միլիոն ոուրլի, ապա աճման տեմպի պատկերն ել ավելի վառ կլինի։ (Մաֆահարություններ)։

Կարևորագույն փաստ և հանդիսանում այն, վոր մենք ունենք աշխատանքի արտադրողականության աճում։ Դուք հիշում եք աշխատանքի արտադրողականության հարցի լենինյան-ստալինյան դրվածքը, վոր հարկավոր և «ապահովել աշխատանքի արտադրողականության այն առաջադիմիական աճումը, առանց վորի անհնարին և սոցիալիզմի վերջնական հաղթանակը կապիտալիզմի նկատմամբ»։ (Ստալին—«Մեծ բեկման տարի»)։ Յեթե կուսակցության XVII և XVIII համագումարում արդյունաբերի միջն ընկած ժամանակաշրջանում մենք ծանր արդյունաբերության մեջ, առանց սեղոնային ճյուղերի, ունեյինք աշխատանքի արտադրողականության 30,7 տոկոս աճում, ապա XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանում աշխատանքի արտադրողականության աճումը կազմեց 78,6 տոկոս (1938 թվին՝ 1934 թ. համեմատությամբ)։

Այսուղ դեր խաղացին՝ ա) տեխնիկական վերակառուցման արդյունքները, նոր գործարանները—նոր տեխնիկան, բ) դեր խաղաց ստախանովյան շարժման ծավալումը 1935 թիվը սկսած, վորը տվեց մեծ արդյունքներ։ Ստախանովյան շարժումը մեծապես ոգնեց յուրացնելու նոր տեխնիկան և բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, կատարելու ընկեր Ստալինի լողունողը, այն է՝ շինարարության պախոսը լրացնել յուրացման պահոսով։ Ստախանովականները նոր մարդիկ են, «վորնք լիովին տիրապետեցին իրենց գործի տեխնիկային, թամբեցին այն և առաջ մղեցին»։ (Ստալին։ Ստախանովականների համամիութենական խորհրդակցություն)։ Յել մենք այսուղ մեծ հաջողություններ ունենք։

Այսպիսով, XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանը նշանակում է աշխատանքի արտադրողականության համար միջն աճումը պայքարի նոր ետապ։ XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակաշրջանը հանգիստանում է հետագա քայլ գեղի առաջ, վորը տվեց սոցիալիստական տնտեսության սիստեմի լուրջ հաղթանակ։

Հաստատելով, վոր «արտադրության տեխնիկայի և մեր արդյունաբերության աճման տեմպի տեսակետից մենք արդեն հստակ և առաջ ենք անցել կապիտալիսական գլո-խավոր յերկրներից», ընկեր Ստալինը հատուկ ուժով ընդ-դեց, վոր «մենք դեռևս հետ ենք մնում տնտեսական տե-սակետից, այսինքն՝ բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող մեր արդյունաբերական արտադրանքի չափի տեսա-կետից»:

Յես կաթօւմ եմ, ընկերներ, վոր և՝ համագումարը, և
ամբողջ կուսակցությունը կլողջումնեն՝ հարցի այս նոր,
ստալինյան դրվածքը։ Մենք պետք ե ամենայն լրջությամբ,
խորությամբ ըմբռնենք ստալինյան այս նոր ինդիքը՝ ոչ
տեսական առևակետից հասնել և առաջ անցնել կապիտալիս-
տական գլխավոր յերկրներից։ Այդ նշանակում ե նոր ըրջան
մեր յերկրի կյանքում և սոցիալիստական շինարարության
մեջ։

Ստալինյան այս նոր մեծ լրզունդը մոբիլիզացիայի յէ
յենթարկում ամբողջ կուսակցությանը, յերկիրը, ամբողջ
ժողովրդին, վորպեսդի չքավականանալով ձեռք բերլածով,
մոտակա 10—15 տարվա ընթացքում անտեսական տեսակե-
տից հասնենք և առաջ անցնենք կապիտալիստական յերկըրե-
ներից։ Սա նեղ պրակտիկ խնդիր չէ, այդ կապվում է
մթերքների առատության համեմու և կոմունիզմի բարձրա-
գույն Փաղին անցնելն ապահովելու խնդրի հետ։ Մենք հա-
վատացած ենք, վոր այս դլխավոր խնդիրը կիրականաց-
նենք, ինչպես վոր մինչև այժմ իրականացրել ենք այն բո-
լոր վիթխարի խնդիրները, վորոնք դրել ե մեր առջե մեծ
Ստալինը։ (Յերկարաւու ծափահարություններ)։

Այդ 10—15 տարվա ընթացքում մենք պետք ե առաջ անցնենք կապիտալիստական գլխավոր յերկրներից բոլոր հյուզերով, մասնավորապես վառելիքի արդյունաբերության գծով (ածուխ, նսավթ), վորը տնտեսական տեսակետից հետ և մեացել ապիկի, քանի ծանր արդյունաբերության այն ճյուղերը, վորոնց մասին ասված ե յերրորդ հնգամյա պլանին վերաբերյալ ընկ. Մորոտովի գեկուցման թեզիսների մեջ ե մորոնց մասին նա այստեղ կցեկուցի:

Աճման տեմպով մենք գնում ենք մյուս յերկրներից

ալելիք բարձր, այդ թվում նաև այնպիսի ճյուղերի գծով, ինչպես ածովին ու նավթը: Բայց չե՞ վոր, ընկերներ, մենք ժառանգություն ենք ստացել աղքատ յերկիր և այդ պատճառով ել տնտեսական տեսակետից հետ ենք մնում:

ՄԵՆՔ ածխի և նավթի դժով պետք է բացառիկ լուրջ ու դժվարին խնդիր կատարենք:

Սենք պետք է 10—15 տարվաս ընթացքում լիկիդացի-
այի յենթարկենք հետ մնալը, ինչպես ել վոր լինի:
Յես հավատացած եմ, վոր մենք այդ հետ մնալը
անպայման լիկիդացիայի կենթարկենք ընկեր Ստալինի
մատնանշած ժամկետում: (Ծափահարություններ):

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ՑՈՒՐԱ-
ՑՈՒՄՆ ՈՒ ԱՎԵԼԱՅՈՒՄԸ ԿԱՐԵՎՈՐԱԴՈՒՅՆ ԽՆԴԻՐ Ե

Պուսակության XVIII համագումարից հետո անդած տա-

րիների ընթացքում մենք անվիճելիորեն վիթխարի քայլ ենք կատարել դեսի առաջ, մեր ձեռնարկությունների կարողություններն ողտագործելու ասպարեզում: Որինակ, եւ կտրուկայանների գծով մենք աշխատում ենք լարված կերպով: Աճը մեծ է. 1934 թվին սահմանված կարողությամբ յուրաքանչյուր աղբեղատ աշխատում եր 4.017 ժամ, 1937 թվին՝ 5.530 ժամ, իսկ մի շարք կայաններում դեռ ավելի բարձր, ավելի, քան ԱՄՆ-ում, Գերմանիայում, Անգլիայում: Յես կասեյի, վոր միքանի կայանների համար դա նույնիսկ չափից գուրս մեծ «նվաճում ե»: Յեթև մենք ունենայինք կարողության ուղղերլիներ, մենք այդքան ճնշում չեյինք դործաղրի աղբեղատների վրա, սակայն դա ցույց ե տալիս, թե մեր մորղիկ ինչպես են աշխատում ավելի լավ ողտագործել աղբեղատները: Ածխարդյունաբերության մեջ հորատման մեքենայի արտադրողականությունը Դոնբասում 1933 թ. 2,1 հազար տոննից 1938 թ. բարձրացավ մինչև յերեք հազար տոննի: Այդ աճումը, սակայն, անրավարար է: Մենք ունենք հորատման մեքենաների այնպիսի մեքենավարներ, ինչպես կրետովք, վորը մեկ հորատող մեքենայով տալիս ե վոչ թե յերեք հազար, այլ մինչև 18 հազար տոնն: Սրանից յերկում ե, թե դեռ վարդան շատ բան կարելի յէ

անել հորատող մեքենայի արտադրողականությունը բարձրացնելու համար:

Նավթարդյունաբերության գծով հորատման արագությունը 1932 թվի 108,3 մետրից 1937 թ. հասավ մինչև 459,9 մետրի: Սակայն այստեղ ևս այդ աճումը չափազանց անրավարար է, մենք ունենք մեծ ռեզերվներ, մեծ հնարավորություններ, վորոնք պետք են լիովին ոգտագործվեն:

Աև մետաղուրդիայի ասպարեզում գոմենյան վառարանների ոգտակար ծավալի ոգտագործման կոեֆիցիենտը բարելավվել է, 1932 թ. 1,75-ից 1938 թ. հասնելով մինչև 1,14-ի: Պողպատի յելուսար մեկ քառակուսի մետր հատակից 1933 թ. 2,8 տոննից 1938 թվին բարձրացավ մինչև 4,64 տոննի:

Սակայն մենք ունենք առանձին դործարաններ, վորոնք գոմենյան վառարաններում տալիս են՝ 0,94—Կրիվոյ Ռոգի գործարանը, 0,95—Կուզնեցկի՝ Ստալինի անվան գործարանը, 0,98—Մակենելկայի՝ Կիրովի անվան գործարանը: Սա ցույց ե տալիս, վոր կան լավագույն յուրացման հնարավորություններ: Նույնը կարելի յե ասել նաև մարտենների գծով:

Բարելավվել է կարողության ոգտագործումը նաև քիմիայի մեջ: Քիմիական արդյունաբերությունը հատկապես ջանք գործարեց արտադրության ինտենսիվիկացիայի ուղղությամբ: Բայց թե այստեղ մենք դեռ ինչպիսի վիթխարի ռեզերվներ ունենք, յերեսում են, որինակ, այն բանից, վոր մինչդեռ կան այնպիսի գործարաններ, վորոնք 1938 թվին աշտարակների մեկ խորանարդ մետրից կամերային ծծմբաթթու ստացել են որական միջին հաշվով 74 կիլոդրամ (Վոյկովի անվան գործարանը), 70,1 կիլոդրամ (Վիննիցայի գործարանը), գործարանների մեծամասնությունը տալիս է 40 կիլոդրամից ել պակաս, իսկ առանձին գործարաններ նույնիսկ 30 կիլոդրամից ել պակաս:

Այսպիսի վոչ քիչ որինակներ դեռ կարելի յեր բերել են մեքենաշնության, և՛ պաշտպանական արդյունաբերության, և՛ արդյունաբերության այլ ճյուղերի գծով: Սակայն մենք պետք ե այստեղ ամբողջ ուժով ընդունենք, վոր չնայած նոր տեխնիկայի յուրացման գործում ձեռք բերված

վորով հաջողություններին, աշխատանքի արտադրողականության աճմանը, մեր ինժեներա-տեխնիկական կաղըրի աճմանը, վորոնք արդեն լուրջ ու սովոր փորձ ունեն, — մենք արդյունաբերության և տրանսպորտի մեր ձեռնարկությունների մեծ մասում մեր կողմից դեռևս չսպառված ռեզերվներ ունենք, մենք դեռ խոչոր թերություններ ունենք մեր ձեռնարկությունների լրիվ կարողության յուրացման գործում:

Բնակչության յուրաքանչյուր չնշին ընկնող մթերքների քանակն ավելացնելու համար անհրաժեշտ կլինի ավելացնել զրանց արտադրությունը: Այդ պարզ է: Դրանց արտադրությունն ավելացնելու համար անհրաժեշտ է, նոր ձեռնարկությունների կառուցման հետ միաժամանակ, հատուկ ուշադրություն նվիրել արդեն կառուցված և վերակառուցված ձեռնարկությունների յուրացմանը:

Մեղքն ի՞նչ թաղցնենք, մեղ մոտ դեռ քիչ չկան այնպիսի աշխատողներ, վորոնք իրենց ձեռնարկության թերությունները, վոր խանդարում են յուրացնելու նրա վակատար կարողությունը և տալու ավելի շատ արտադրանք, քան նատալիս ե, պատրաստ են վերադրելու զանազան որյեկտիվ պատճառների, մի խոռով՝ ցցելու հարեւանի վրա, թե հարեւանն է մեղավոր: (Նիծաղ):

Ճիշտ է, հաճախ սարքավորումը չի բավականացնում, յերբեմն ել հարեւաններն են խանդարում, — թերություններ, վորոնք նույնակեն պետք ե վերացնել, բայց ամենից առաջ անհրաժեշտ և ուշադրություն դարձնել արտադրության կազմակերպման մեջ յեղած այն թերություններին, վորոնք առանց նյութական մեծ ծախսների ու առանց մեծ աշխատանքի կարող են եփեկտ տալ արտադրանքի արտադրությունն ավելացնելու ասպարեզում, վորպեսզի ձեռնարկությունից վերցնենք այն, ինչ վոր տեխնիկայի և եկոնոմիկայի որենքների համաձայն հնարավոր է:

Ես կարծում եմ, վոր ներկայումս քիչ կդանիեն այնպիսի տնտեսավարներ, վորոնք կարողանան պնդել, թե իրենք երենց ձեռնարկությունից վերցնում են այն ամենը, ինչ հնարավոր է: Այդ առավել ևս ճիշտ չեր լինի ասել նոր ու վերակառուցված ձեռնարկությունների վերաբերմամբ, վո-

բոնք մի շարք ճյուղերում արդեն գլխավորող տեղ են
դրավում:

Այսպես, որինակ, արդեն 1936 թվին նոր և ամրողապես
վերակառուցված ձեռնարկություններից առաջված արտա-
դրանքը կազմեց ու մետալուրգիայի գծով—96,6 տոկոս,
դրանքը կազմեց ու մետալուրգիայի գծով—95,2 տոկոս, ելեկտրոկայանների գծով—
90,8 տոկոս:

Այդ նոր տեխնիկան անհրաժեշտ է թամրել, յուրացնել
այն: Դժբախտաբար այս բնադրավառում ձեռք և բերված
վոչ բոլորը:

Ստախանովյան շարժումը մեզ ցույց տվեց, թե ինչ-
պիսի վիթխարի ուղեկրվների կան մեր արդյունաբերության
և դյուզատնտեսության մեջ: Ճիշտ ե, ստախանովյան շար-
ժումը և այդ ուղեկրվների ուղարկության հաշվետու ժամա-
տնակազմանում մեզ այնքան շոշափելի եֆեկտ չտվեց, ստ-
ախանովյան մասն վոր, ուղարկության նվաճումները
կայն այն հանդամանքը, վոր ստախանովյան նվաճումները
միունքն ամրապնդված չեն տնտեսության մի շարք ճյուղե-
րում, բնավ չի նշանակում, վոր այդ ուղեկրվները ուեալ չեն:
Դա միայն ցույց է տալիս, վոր մեր կաղըքերեց շատերը ան-
դամապատճեն գործության մեջ շարժումը գլո-
խավորելու մասին մեր կուսակցության կենտրոնի պահանջ-
ներն իրականացնելու համար:

Հենց այդ պատճառով ել այժմ, յեր մեր առջև դրվում
է մեծագույն կարևորություն ունեցող նոր խնդիր—տնտե-
սական տեսակետից առաջ անցնել կաղիտավալիստական յեր-
կըրներից, խնտ բարձրացնել բնակչության յուրաքանչյուր
շնչին ընկնող արտադրանքի քանակը, մենք պետք են ամե-
նայն համառությամբ ու հաստատակամությամբ ոլայքա-
լի մեծ համառությամբ ու համառությամբ մեր ամբողջ անուն
բնակչության առաջնության շարժման նոր վերելքի, հանուն
այն բոլոր լավագույն ցուցանիների տարածման, վոր ձեռք
և բերել առաջալոր ստախանովականները, հանուն այն
վիթխարի ուղեկրվների իրացման, վոր հայտաբերեցին
ստախանովականները, և վորոնք այժմ արդյունաբերության
ու գրանուլութիւն լավագույն ձեռնարկություններում ստա-
խանովականները գործնականում իրականացնում են:

Կարդապահանության մասին ԽՍՀՄ ժողկոմիորհի, Համ.
Կ(բ)Կ կենտրոնի և ՀՍՄԿՍ-ի վորոշման ազնիվ ու բարե-

իրղծորեն իրականացնելը, անկարգապահ տարրերի դեմ,
դործալիքների դեմ պայքարելը պետք է զուգակցվի առա-
խանովյան շարժման ու հարվածայնության նոր վերելքի
չուրջը մասսաներին կազմակերպելու հետ: Բայց դրա հա-
մար անհրաժեշտ է բարեկամիւլ արտադրական պրոցեսի կաղ-
մակերպումը, բանվորների համար ապահովել աշխատան-
քային տեղը, դործիքը, հումքը, ելեկտրոներդիան, ապա-
հովել միենալուն ձեռնարկության զանազան ցեխերի, մին-
ուույն ցեխի զանազան մասերի աշխատանքի կոմպլեքսայնու-
թյունն ու ներդաշնակությունը, հանքահորում՝ հանքի հա-
տումը, կիտումը, պատերի ամրացումը, հանքաքարի փոխա-
գորումը, բարձրացումը, վագոնետկաների մատակարա-
բումը և այլն:

Ձեռնարկությունների աշխատանքը բարեկամիւլու համար
բացառիկ կերպով մեծ նշանակություն ունի սկզբնական
համարնատարական ողակի՝ ցեխի պետի, վարպետի, բրի-
դաղիրի, տեղամասի պետի գերի բարձրացումը:

Մետալուրգների և լեռնադորձների ընդունելությանը
1937 թվի հոկտեմբերի 29-ին ընկեր Ստալինը միջակ ու
փոքր գեկալարների մասին ասաց.

«Դրանք, այդ վոքր ու միջակ գեկալարները,
մեզ մոտ տասնյակ հազարներ են կազմում: Նրանք
համեստ մարդիկ են, նրանք առաջ չեն խցկվում,
նրանք համարյա աննկատելի յեն: Բայց կուրություն
կլիներ նրանց չեկատելը: Վորովհետև այդ մարդ-
կանցից ե կախված արտադրության բախտը մեր ամ-
բողջ ժողովրդական տնտեսության մեջ: Նշանակում
ե, նրանցից ե կախված նաև մեր տնտեսական գեկա-
վարության բախտը»:

Վարպետի դերի ու նշանակության բարձրացման հարցի
չուրջը ընկեր Ստալինը հրավիրեց դործալիքանների ու ար-
դյունարկերական ժողկոմատների մի քանի աշխատողների
համար նեղ խորհրդակցություն: Դժբախտաբար, յեկ պետք
և ասեմ, վոր տնտեսավարները զեռ հարկ յեղած յեռանդ
չեն ցուցաբերել այդ դործում:

Պետք ե բարձրացնել վարպետի, տեղամասի պետի,
բրիդաղիրի, ցեխի պետի գերն ու նշանակությունը: Պետք ե

նրան հնարավորություն տալ, վորապեսղի նա լավագույն մարդկանց կարողանա պարզեատրել, վորապեսղի նա ավելի մեծ իշխանություն ունենա աշխատողներին ընդունելիս և հեռացնելիս, վորապեսղի նա լիթվան հրամանատար լինի ցեխում, հերթափոխում, բրիգադայում:

Անտարակույս, անհրաժեշտ և շտկել այն գրությունը, վորը գոյություն ունի մի շարք ձեռնարկություններում, յերբ վարպետն ավելի պակաս աշխատավարձ և ստանում, քան վորակյալ բանվորը:

Ձեռնարկության և, հետևասղես, բոլոր բանվորների նորմալ աշխատանքն ատահովելու դործում, այսինքն՝ կարողությունների լավագույն ոգտագործման գործում խոչընթագույն նշանակություն ունի ավարիաների և պարապուրդութեանը դեմք պայքարելը: Պետք է ուղղակի ասել, վոր մի ամբողջ շարք ճյուղերում, այդ թվում նաև ածխարդյունաբերական, մետալուրգիական ճյուղերում, նույնիսկ մեքենաշինության մեջ, ել չեմ խոսում արանսպորտի մասին, ավարիաներն ու պարապուրդները մեծ չարիք են հանդիսանում նորմալ, անխափան աշխատանքի համար:

Գլխավոր գործը ավարիաների կանխումն և, իսկ այլ կախված եւ արտադրությունը կազմակերպողներից, վորոնք հաճախ հանդիսանում են արդեն կատարված ավարիայի տուժարագործներ և վոչ թե ավարիաների կանխումը կազմակերպողները: Մինչդեռ ավարիաների դեմ մղվող պայքարով է ստուգվում զեկավարի վորակը: Ծանր արդյունաբերության ժողկոմատում հրաման արձակվեց ավարիաների հաշվառման ու դբանց դեմ պայքարելու վերաբերյալ, և ահա թե Ծանր արդյունաբերության ժողկոմատի գլխավոր վարչություններից մեկի պետը—Սիրենկոն, ինչպես իրականացրեց այդ հրամանը: Այդ ինքն Սիրենկոն, իրեն նեղությունից աղատելու համար, նախապես, մի քանի որ առաջ, չլրացրած ամփոփագրեր և ստորագրում ավարիաների վերաբերյալ, վորոնք այնուհետեւ պետք է լրացներ տեխնիկական աշխատողը: Բայց վերջինս սխալմամբ տեղեկադրի փոխարեն ուղարկել եր գատարկ բլանկը՝ գլխավոր վարչության պետի ստորագրությամբ: Այդ գատարկ բլանկը մենք պահեցինք և, իհարկե, ավարիաների դեմ պայքարող այնպիսի

«մարտիկին», ինչպիսին եր Սիրենկոն, մենք աղատեցինք գատարկ ամփոփագրեր ստորագրելու ծանր պարտականությունից: (Ծիծաղ): Ավարիաների դեմ պայքարող այդպիսի «մարտիկինը» մեզ մոտ, դժբախտաբար, դեռ չեն վերացել: Անհրաժեշտ է, վոր մենք՝ տնտեսավարներու, լրջորեն ձեռնամուխ լինենք ավարիաները լիկվիդացիայի յենթարկելու գործին:

Հաճախ պարապուրդների ու ավարիաների հասցնող, պետությանը մեծ վնաս պատճառող խոչոքագույն թերություն և հանդիսանում սարքավորման վատ նորոգումը, վորի հետևանքով հիմնական կապիտալը ժամանակից շատ և մաշվում:

Այս տարի Համեկ(բ)կ Կենտկոմը և Ժողկոմխորհը կարենը վորոշում ընդունեցին սարքավորման նորոգման մասին, նորոգումն ապահովեցին փողով, նյութերով: Անհրաժեշտ է, վորապեսղի տնտեսավարներն ոգտագործեն այդ կանոնը վորոշումը, ապահովեն սարքավորման լավագույն խնամքը, հետեւն նրան, ինչպես կենդանի որդանիզմի: Սարքավորման ժամանակին կատարված նորոգումը, կանոնավոր վիճակում պահելը, նրա կանոնավոր շահագործման վրա հսկելը, վորապեսղի այդ սարքավորումով աշխատող բանվորը, վարպետը, բրիգադիրը չկոտրատի այն—խոչորագույն գործոն և հանդիսանում ձեռնարկությունների կարողությունները լավագույն կերպով յուրացնելու և դրանով իսկ արտադրանքի քանակն ավելացնելու բնագալառում:

Դժբախտաբար պետք է ասել, վոր տնտեսական հաշվառքը մեզ մոտ չի խաղում այն դերը, վորը պետք է խաղաղ նա ձեռնարկությունների անխափան աշխատանքի համար պայքարելու գործում, վորովհետև ձեռնարկությունների անխափան աշխատանքը և կարողությունների լավագույն ոգտագործումն ե միայն, վոր հասցնում և Փինանսական լավագույն գուցանիչների: Ավարիաները, պարապուրդները, հումքի կորուստները և բանվորների վարձատրումն առանց արտադրանք տալու, թեկուզ և պակաս վարձատրությունը, միշտ հասցնում և միասների ու Փինանսական դժբախտությունների:

Առանձնապես անհրաժեշտ է կանդ առնել ստախանովականների, մեր յերիտասարդ տաղանդավոր ինժեներատեխնիկական կաղըրերի՝ ուսցիոնալիզատորական առաջարկների ռեալիզացիայի վրա, տեխնիկական նոր կատարելագործումների ու գյուտերի արմատացման վրա, վորովհետեւ արտադրանքի աճման կարելի յև հասնել վոչ միայն ի հաշվի նոր գործարանների կառուցման, այլև ի հաշվի հների ուսցիոնալիզացիայի, ընդվորում միջոցների, ուժերի և շնորհարական նյութերի նվազագույն ծախսմամբ:

Գյուտթյուն ունեցող կարողությունները յուրացնելու և աճեցնելու գործում խոչորագույն ռեզերվներ են թագնված ինտենսիվիկացիայի, ուսցիոնալիզացիայի և մեր արդյունաբերության մեջ նորմուծություններ մացնելու ասպարեզում։ Դեռ ինչքա՞ն բան կարող ենք մենք ճեռք բերել այստեղ։ Առանց չափազանցության կարելի յեւ պատասխանել՝ միլիարդ ուռերլիներ։

Յես կերեմ միքանի որինակներ։

Անհրաժեշտ է, վոր մենք բարձրացնենք չուգունի ձուլումը, — բայց արդյո՞ք հենց միայն ի հաշվի մետալուրդիական նոր գործարանների կառուցման, վորոնք միլիարդներ արժեն։ Մենք կարող ենք լրացնեցիչ կերպով ստանալ հակայական քանակությամբ չուգուն՝ դոմենյան պրոցեսի մեջ գործադրելով թթվածին ներփչելու մեթոդը։ Մենք այժմ դնեպրոպետրովսկում կառուցում ենք մի փոքր դոմենյան հնոց և թթվածնային սարքավորում, դոմենյան պրոցեսի մեջ թթվածին ներփչելու մեթոդը գործադրելու համար։ Դա փորձ կլինի, բայց ի՞նչ կարող ե տալ մեզ այդ փորձը։ Թթվածին ներփչելու մեթոդով աշխատելու դեպքում դոմենյան հնոցների արտադրողականությունը կարող է բարձրացվել յերկու անգամ։ Հետևաբար, մենք կարող ենք չուգունի արտադրությունը բարձրացնել յերկու անգամ, յեթե գործադրենք թթվածին ներփչելու մեթոդը։ Իսկ այդ պվելի եժան է, քան դոմենյան հնոցներ կառուցելը։ Դոմենյան հնոցի ոդտագործման կուտիցիենտը կարելի յեւ հասցնել մինչև 0,5-ի՝ 1,14-ի մոխարեն։ Այդ՝ աճումն ե ավելի քան յերկու անգամ։ Թթվածին ներփչելու մեթոդի գործադրումը հնարավորություն կտա կոքսի ծախսումը պակասեցնել

յուրաքանչյուր տոնն չուգունի համար 10—15 տոկոսով։ Թթվածնի կիրառումը հարստացնում է պրոցեսը և մեզ տալիս ե ավելի բարձրորակ չուգուն և դրանով իսկ մեզ հնարավորություն ե տալիս ստանալու ավելի բարձրորակ մետաղ։

Այսպիսով, հենց միայն այդ ձեռնարկման՝ թթվածնային մեթոդի գործադրումը կարող է մեզ տալ կարողությունների խստ աճում։

Պողպատի մակերեսային կոփումը նույնակես կարող է հսկայական եֆեկտ տալ։ Պրոֆեսոր Վոլոգդինը և պրոֆեսոր Գելինդը, յուրաքանչյուրն իր ձեռով, մշակել են մետաղի մակերեսային կոփուման մեթոդ։ Ռելակը, որինակ, մեզ հարկավոր են միլիոնավոր տոններով։ Ռելակը մաշվում են ամենից առաջ կցման տեղում։ Ուրեմն, ուլսերը կարելի յեւ կոփել առաջին հերթին կցատեղերում, և այդպիսի ուլսը կտանա անհամեմատ ավելի մեծ կայունություն՝ մաշվելու տեսակետից։

Մակերեսային կոփումը կարելի յեւ կիրառել ամեն մի մետաղի նկատմամբ, և այդ կտա մետաղի սպառման վիթխարի անտեսում, վորովհետեւ կավելացնի գործիքների, դետալների ու մեքենաների մասերի գործածության ժամանակամիջոցը։ Կան նաև այլ նոր յեղանակներ։ Որինակ, գործիքների կոփումը, վորը կրկնակի չափով ավելացնում է գործիքի ամրությունն ու գործածության ժամանակամիջոցը, կրծատում է հազվագյուտ մետաղների ծախսումը։

Մեծ դորձ է անմիջական անձուլածո գլանումը։ Այժմ մենք ձուլումից հետո մետաղը լցնում ենք հատուկ կաղապարների մեջ, այնուհետև գլանումից առաջ ձուլվածքը նորից տաքացնում ենք հնոցում, ապա արդեն դցում գլանով գաղղրյակի մեջ, մինչդեռ կարելի յեւ ուղղակի կատարել մետաղի անձուլածո գլանում, խուսափելով հալած մետաղը հատուկ կաղապարների մեջ լցնելուց և ձուլվածքը տաքացնելուց։ Այդ մեծ չափով կավելացնի գլանով դադյահների արտադրողականությունը։

Ելեկտրոկայանների բնադավառում։ Ամերիկայում այժմ ելեկտրոկայաններում տուրբինները դնում են հին կայանների կողքին կառուցված շնորհերում, ընդվորում դնում են

բարձր ճնշման տուրբիններ: Ընդհմին բարձր ճնշման տուրբիններում գործածված գոլորշին ուղարկործվում է ցածր ճնշման տուրբինների համար: Յեթև մենք մոտ զբաղվենք միայն նրանով, վոր կառուցենք նոր ելեկտրոկայաններ, նորից կառուցենք ամբողջ շնչը, բոլոր բնակարանները և այլն, ապա մենք չատ ու չատ տարիներ կտառապենք ելեկտրոկայանների պակասից: Ուստի մենք պետք է վոր ուղարկործենք այդ փորձը:

Վոչ քիչ հնարավորություններ կան նաև քիմիայի բնագավառում, վորոնք կարող են տալ քիմիական արտադրանքի լուրջ ավելացում: Թե ի՞նչ կարող են տալ մեզ դյուտերը, յերեսում և հետեւալ որինակից: Քիմիական արտադրանքի արտադրումն ավելացնելու համար տնտեսավարները մեկ ու կես միլիարդ ոռութիւն ենին պահանջում շինարարության նպատակով: Յերբ մենք նրանց մերժեցինք և հրամայեցինք հնարավորություններ փնտռել արտադրությունն ավելացնելու ի հաշիվ այլ աղբյուրների, ապա ընկերները փնտռեցին, և բանից զուրս յեկավ, վոր մի քանի տարիների ընթացքում Ծանր արդյունաբերության ժողկոմատի ընդերքում ընկած է յեղել շարքային ինժեներների մի գյուտ, վորը հնարավորություն և տալիս այդ նյութերն ստանալու վոչ թե մեկ ու կես միլիարդ ոռութիւն, այլ ընդամենը 50 միլիոն ոռութիւն ծախսելով: Ստացվեց «փոքրիկ» տնտեսում—1 միլիարդ 450 միլիոն ոռութիւն: (Ծիծաղ): Ի պատիվ կանաց, պետք է ասել, վոր այդ գյուտի դեկավարն է յեղել մի կիր ինժեներ: (Ծափահարություններ):

Կան այնպիսի բաներ, իսկն ասած՝ նույնիսկ վոչ թե բաներ, ինչպես ծուլսը, վորոնք կարելի յե ուղտագործել վորպես հումք քիմիական արդյունաբերության համար: Ծուխը ծուլս է, իսկ մենք կարող ենք և պետք ենրանից ստանանք լավ, պիտանի քիմիական նյութ: (Ծափահարություններ): Մենք նույնպիսի հնարավորություններ ունենք նաև գումարվոր մետալուրգիայի աստարելում:

Յերկաթուղային տրանսուրսում մեծ հնարավորություններ կան վառելիքի տնտեսման, շոգեքարշերի գծով: Յերկաթուղային տրանսուրսուն որական գործածում և 110—120 հազար տոնն ածուխ: Դա ածիսի խոշորագույն

սպառողներից մեկն է: Մինչդեռ չողեքարշերի սպառակարգության կոեֆիցիենտը ցածր է: Յեկամ, ընկերներ, յեթև աշխատենք այդ բանի վրա, իսկ մենք այժմ աշխատում ենք, մենք արդեն պատրաստում ենք շոգեքարշերներությունը, վորոնք արդեն այժմ տալիս են ածիսի 25—28 տոկոս խնայողություն, —մենք կարող ենք ստանալ մեծ տնտեսում: Այժմ գյուտարար, նախկին մեքենավար Ֆրոֆիմովն իր յերեք վորդիներով աշխատում է շոգեքարշենայի վերակառուցման վրա, վորը նրա հաշիվներով պետք է հին շեգեքարշերի վրա ևս տա վառելիքի 25—30 տոկոս անտեսում:

Կան նաև այսպիսի բաներ՝ արորդած գոլորշին, վորը ցիլինդրից դուրս կալով կորչում է, այժմ հնարավորություն կա այդ գոլորշին ուղղել տենդերի մեջ, նա ջուրը առաջանում է մինչև 95 աստիճան: Դրա հետեւանքով մենք շոգեքարշի վրա ստանում ենք վառելիքի 20—22 տոկոս անտեսում:

Մենք չատ-չատ կարենոր գյուտեր ունենք նաև ածիարգյունաբերության մեջ, բայց ուելիզացիայի խմասով այստեղ մենք բավականաշափ հետ ենք մնացել: Մենք ունենք միայն հանքահատ մեքենաներ, վորոնք ողոցում են ածուխը: Անհրաժեշտ է ապահովել նաև կիտման մեխանիզմիան, քանի վոր ողոցված ածիսի կիտման մեխանիզմայի հատ մնալն անդրադառնում և հանույթի ընթացքի վրա. ել չենք խոսում կիտման ծանր պայմանների մասին, յերբ բացակայում է մեխանիզմային: Մենք արդեն այժմ ունենք այնպիսի մեքենա, վորը կատարում է ածիսի և ողոցումը, և կիտմանը—ունենք կոմբայն: Մենք այժմ պետք է այդ կոմբայնն արտադրենք արդեն մասսայական մասշաբով: Մասսամբ այդ կոմբայնն արդեն արմատացված է հանքահատ մեքենայի հետով՝ գողացվորված բարով, վորը վոչ միայն սղոցում, այլ և հասում է ածուխը:

Մենք տուժում ենք անցքերի փորման մեխանիզմների բացակայությունից: Այժմ կա մեքենա, վորը հեշտացնում և անցքերի փորմանը: Կարելի յե անցքը փորել հինգ անդամ ավելի արագ, քան այժմ: Մենք պետք է այդ մեքենան ար-

մատավորներ ամեն կերպ և գրանով իսկ արտգայնենք ու
հժանացնենք Հանքահորերի կառուցումը:

Ածխի Հանույթի ասպարեզում կարելի յէ գործադրել
նևև հիդրոմեխանիզացիան—ածուխ կտրել ջրի ողնությամբ:
Կիզելուգում կատարված փորձերը ցույց տվին, վոր
մոնիուրի արտադրողականությունը 7—10 անդամ ավելի յէ
Հանքահատ մուրճի արտադրողականությունից: Զրահատիչը
միջոցով ածուխ հանելիս ածուխը տեղն ու տեղը լվաց-
վում և ջրով, մաքրվում և ամեն ահսակ խառնուրդներից և
հարստանում ե: Ստացվում և բարձրորակ ածուխ:

Տորֆի Հանույթի վրա խիստ անդրադանում և հա-
նույթի սեղոնականությունը: Այժմ տորֆային արդյունա-
քերության մեջ զոյսություն ունի տորֆի արհեստական
ջրագրկման յեղանակը, վորը հնարավորություն և տալիս
տորֆ արդյունահանելու ամբողջ տարվա ընթացքում: Տոր-
ֆի արհեստական ջրագրկման գործարանները, վորոնց կա-
ռուցումը մենք արդեն սկսել ենք, կտան բարձրորակ տորֆ՝
ըրիկեաների ձեռվ, իսկ թե ինչպիսի նշանակություն ունի
տորֆը, մանավանդ բարձրորակ տորֆը, յերեսում և այն
բանից, վոր այժմ, որինակ, արդեն ապացուցված և, վոր
գոմենյան հնոցները կարելի յէ լցնել վոչ թե կոքսով, այլ
տորֆով և ստանալ չուզուն, առանց ծծումբի ու առանց
ֆոսֆորի, ինչպես սպացվում և փայտածխից:

Նավթարդյունարերության մեջ ամենաարժեքավոր գյու-
տը տուրբոհորատիչն ե, վորի վրա աշխատում են արդեն
մոտ 10 տարի: Այժմ մենք նավթահարերի կառուցման հա-
մար գործադրում ենք այսպիս կոչված՝ պատույտահորատու-
մը: Նավթահորերը փորում ենք հորատիչ խողովակների
միջոցով: Պատկերացրեք, վոր յերկու և ավելի կիլոմետր
խորության վրա դետի խորքում նավթ կա: Այստեղ հաս-
նելու համար հարկավոր և փորել նավթահօր: Հողի մեջ
խողովակներ են իջեցվում, և այդ խողովակները, յերեմն
մինչեւ յերկու կիլոմետր յերկարությամբ, պտտվում
են ոստորի ողնությամբ, և դուրս փորում են
հողը: Այդ դեպքում Հաճախ ավարիաներ են պա-
տահում խողովակների հետ, կոտրվում և դուրը,

փոխելու համար պետք է խողովակները վերև բարձրաց-
նել: Աշխատանքի ժամանակ խողովակները արորվում են,
փշանում: Հաճախ պատահում և այսպիսի բան, վորին յես
ականատես եմ յեղել բազվում: մարդկեկ հորատման միջո-
ցով 1860 մետր անցել եյին գետնի խորքը, մնում եր անցնել
մի 5—10 մետր, բայց գուրը կոտրվեց և ամբողջ աշխա-
տանքը փչացալ: Ամիսներով դուրս եյին քաշում գուրը,
դուրս եյին քաշում խողովակների կտորները:

Տուրբոհորատման ժամանակ խողովակները կիսաղան
միայն առաջ տանողի գեր: Վոչ մեծ տուրբոհորատիչը խո-
ղովակի միջով իջեցվում և ներքեւ, նրա ծայրին ամրաց-
վում և դուրը: Այդ տուրբոհորատիչը շարժման մեջ և
դրվում կավաշաղախի միջոցով, վորը վերևից ընկնում և
փորիչի վրա, փորման պղոցեսը հեշտացնելու համար: Այդ,
բառիս բուն իմաստով՝ հիդրոտուրբին ե: Արդեն յուրացված
ե 1300—1400 մետր խորության վրա տուրբոհորատիչով հո-
րատելը: Մենք ծրագրել ենք տուրբոհորատիչը լայնորեն
գործադրել Արևելքի նավթային շրջաններում:

Լուրջ գյուտեր կան նաև նավթի վերամշակման բնադա-
վառում: Նույնիսկ միայն լեզվիրացված խողովակների գոր-
ծադրումը տալիս երենդինի յելուստի ավելացնում: Կոմբի-
նացված կրեկինդ-սարքավորումների գործադրումը 45—47
տոկոսով ավելացնում երենդինի յելուստը Արևելքի թեթի
ծծմբային նավթից:

Աչքի ընկնող գյուտերի այսպիսի որինակներ մենք շատ-
շատ ունենք արդյունարերության բոլոր ճյուղերում, այդ
թվում նաև մեքենաշինության մեջ:

Ընկեր Ստալինը տնտեսական ժողկոմատներին բազմիցս
մատնանշել ե, վոր անհրաժեշտ և մեծ ուշադրություն նվի-
րել գյուտերին ու գյուտարարներին: Տնտեսավարները պետք
ե ամեն կերպ խրախուսեն ու աշխացնություն ցույց տան
դյուտարարներին և նրանց համար ապահովեն աշխատանքի
բոլոր անհրաժեշտ պայմանները:

Հայրենի գյուտերի ողտագործման և լայնորեն արժա-
տացման հետ միասին պետք ե արտասահմանից վերցնենք
բոլոր տեխնիկական նորամուծությունները, ինչպիսիք վոր

այնուեղ կան: Մենք կապիտալիստական յերկրների համեմատությամբ տուավելություններ ունենք այդ նորամուծություններն արմատացնելու տեսակետից: Մենք այդ կապիտալիստական յերկրներից ավելի ուշ ենք սկսել զարգացնել արդյունաբերությունը: Բայց դրանումն ե վոչ միայն մինուսը, այլև մեր պլյուսը, վորովհետև նոր կառուցելով, մենք բոլոր հնարավորություններն ունենք տեխնիկայի ամենանորագույն նվաճումներն արմատացնելու համար: Ընկեր Ստալինի կողմից դրված խնդիրը կատարելու համար,—այն ե՝ ունտեսական աեսակետից առաջ անցնել կապիտալիստական գլխավոր յերկրներից, —մենք պետք ե շատ կառուցենք: Նոր ձեռնարկություններ կառուցելիս մենք պետք ե նրանցում կիրառենք ամենանորագույն տեխնիկան:

Նոր ձեռնարկությունները պետք ե կառուցել ավելի արագ ու ավելի եժան: Առաջ, որինակ, հանքահորերը կառուցվում ենին 6—8 տարում: Այս տարի մենք փորել ենք 4 հանքահոր և դրանք կառուցել ենք 10 ամալա ընթացքում: Մենք բանին հասանք շինարարության արագընթաց մեթոդների գործադրման չորհիվ:

Շինարարության նոր վիթխարի ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ ե, վոր մենք լայնորեն արմատացնենք արագընթաց շինարարության մեթոդը, լայնորեն արմատավորենք մեխանիզացիան: Մենք պետք ե շինարարությունը հասցնենք նոր բարձրության:

Ինչպես շինարարության, այնպես և մանավանդ նոր կառուցվող ու ընդարձակվող ձեռնարկությունների համար կզահանջվի բանվորական ուժ: Այսոեղ պետք ե ողնություն ցույց տան կոլտնտեսությունները: Ընկեր Ստալինն իր գերիսուցման մեջ դիմեց կոլտնտեսություններին, խնդրելով բանվորական ուժ տալ արդյունաբերության համար:

Ընկեր Ստալինի այդ դիմումը կոլտնտեսություններին բացառիկ մեծ նշանակություն ունի մեր յերկրի կյանքի համար, ամբողջ սոցիալիստական շինարարության համար: Մենք հավատացած ենք, վոր կոլտնտեսությունները կարծագանդեն ընկեր Ստալինի այդ դիմումին և բանվորական ուժ կոտան մեր արդյունաբերության համար:

Վ.ՌԵԼԱՆՅՈՒԹԱՑԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՍԳԱՎԱ ՎԵՐԵԼՔԻ ՄԱՍԻՆ

Կարիք չկա ապացուցելու, վոր տնտեսության հետադասման կարևորագույն պարմանն և՝ վերացնել վառելանցությին արդյունաբերության հետ մասը, ուստի թույլ տվեք առանձնապես կանգ առնել դրա վրա:

ԱՄԽԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

XVII համագումարից մինչև XVIII համագումարն անցած հաշվետու ժամանակաշրջանում ածխարդյունաբերությունն ածխի հանույթը 1933 թ. 76,2 միլիոն տոննից 1938 թվականին հասցը 132,9 միլիոն տոննի, այսինքն՝ ավելացրեց 74,4 տոկոսով:

Միության ավազաններում քարածխի հանույթի դինամիկան 1934 թվականից մինչև 1938 թվականը ներառյալ ժամանակաշրջանում հետևյալն եղ.

Դոնեցի ավազանում ածխի հանույթը 1934 թ. 59,7 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 78,3 միլիոն տոննի, կամ 131,2 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Կուղնեցկի ավազանում ածխի հանույթը 1934 թվականի 11,2 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 16,8 միլիոն տոննի, կամ 150 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Խակասիայում ածխի հանույթը 1934 թվականի 0,452 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 0,855 միլիոն տոննի, կամ 189,2 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Մերձմուկալյան ավազանում ածխի հանույթը 1934 թվականի 4,62 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 7,40 միլիոն տոննի, կամ 160,2 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Կարագանդայում ածխի հանույթը 1934 թվականի 1,83 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 4,15 միլիոն տոննի, կամ 226,8 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Ռուբակում ածխի հանույթը 1934 թվականի 5,48 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 8,06 միլիոն տոննի, կամ 147,1 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Արևելյան Սիբիրում ածխի հանույթը 1934 թվականի

2,32 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 3,64 միլիոն տոննի, կամ 156,9 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Տեղիբուլիում ածխի հանույթը 1934 թվականի 0,221 միլիոն տոննից 1938 թվականին հասավ 0,261 միլիոն տոննի, կամ 113 տոկոսի՝ 1934 թվականի նկատմամբ:

Տեղաբաշխում ածխի հանույթը 1938 թվականին կազմեց 1935 թվականի 185,6 տոկոսը:

Ինչպես ցույց են առլիս այս տվյալները, մենք ունենք վորոշ ընդհանուր աճում և Դոնբասի հետ միասին նաև այլ ավագանների աճում, բայց անբավարար: Ածխի հանույթի այդ աճումն այսուամենայնիվ խիստ հետ և մնում կարեռադույն սպառող ճյուղերի արտադրանքի աճումից: Են, վորպես ածխի խոշոր սպառողներից մեկը, առանձնատիս դպում եմ այդ: Բայց դժբախտաբար, ինձ համար միշտ ել հեշտ չե պահանջներ ներկայացնել Հաղորդակցության ձանապարհների ֆողկոմատի կողմից վառելանյութային արդյունաբերության ժողկոմ ընկ, Կադանովիչին: (Ծիծաղ):

Ածխարդյունաբերության ասպարեզում մեր առջև ծառացած են հետեւյալ խնդիրները:

Առաջին՝ զարգացնել ածխի հանույթը մինչև նրա պահանջը լրիվ բավարարվելը:

Երկրորդ՝ զարդացնել ածխի հանույթն ամենուրեք, վորտեղ նա կա, իսկ մեզ մոտ ամենուրեք ածուխ կա՝ Խաղողիկանոսից մինչև Ուրալ ճգփող ամբողջ տարածուղար ովկիանոսից մինչև 113,8 միլիոն տոննի, իսկ ավագանի տեսակարար կշիռը 1942 թվականին իջնելու յե մինչև 48,7 տոկոսի: Ածխի ամբողջ պաշարը ԽՍՀՄ-ում կենտրոնացված է ածխի համաշխարհային պաշարի ավելի քան 20 տոկոսը: Ածխի ամբողջ պաշարը ԽՍՀՄ-ում կազմում է 1.654.361 միլիոն տոնն: Միմիայն կուրբառը հողի ընդերքում ունի ածխի 450 միլիորդ տոնն պաշար:

Այսինչ, ածխի հանույթը մեզ մոտ չափաղանց անհամաշխափ և զարդացած: Դոնբասը, վորն ունի ԽՍՀՄ-ի ածխի ամբողջ պաշարի 5,4 տոկոսը, 1938 թվականին տվեց Միության մեջ ածխի հանույթի 58,9 տոկոսը:

Պետք է ասել, վոր ընկեր Ստալինը շարունակ դրդում է մեզ լուծելու այդ սլորդեմը և վերացնելու այդ անհամա-

չափությունը: Ածխի պաշար ամենուրեք կա, բոլոր ժարդեւում: Մենք պետք են վերցնենք այն, վորտեղ միայն կա:

Երբորդ հնդամյակում ծրագրված են ածխի հանույթի ուժեղ աճումը նոր շրջաններում (Մերձմոսկովյան ավաղան, Ուրալ, Միջին Ասիա, Հեռավոր-Արևելյան Յերկիր, Որսկի մըջան և այլն), մանավանդ վոր դրանցից մի շարք շրջաններ, ինչպես, որինակ, Մերձմոսկովյանը, ահա արդեն մի քանի տարի յե, վոր միևնույն տեղն են կանգնած:

Վերջին ժամանակներս ընկեր Ստալինը հատուկ առաջարանք տվեց մեղ՝ մշակել Մերձմոսկովյան ավաղանի հարցը:

Վառելանյութային Արդյունաբերության ժողկոմատը մշակեց Մերձմոսկովյան ածխային ավաղանը բարձրացնելու պլանը, վորի համաձայն ծրագրված երական միջին հանույթը 22 հազար տոննից 1940 թվականին հասցնել մինչև 50 հազար տոննի և 1942 թվականի յերկրորդ կեսերին՝ 100 հազար տոննի: Բարձր տեմպ է ուրվագծված նաև մյուս ավաղանների համար:

Վորպես արդյունք յերրորդ հնդամյակի համար ծրագրված շինարարության, Վառելանյութային Արդյունաբերության ժողկոմատի վծով ածխի հանույթի մեջ ստացվելու յեն ածխային ավաղանների տեսակարար կշռի հետեւյալ փոփոխությունները:

Դոնեցի ավաղանում 1942 թվականին ածխի հանույթը հասնելու յե մինչև 113,8 միլիոն տոննի, իսկ ավաղանի տեսակարար կշիռը 1942 թվականին իջնելու յե մինչև 48,7 տոկոսի: Մյուս բոլոր ավաղաններում տեսակարար կշիռներն աճում են:

Մերձմոսկովյան ավաղանում ածխի հանույթը 1942 թվականին հասնելու յե մինչև 35 միլիոն տոննի, իսկ ավաղանի տեսակարար կշիռը 1942 թվականին հասնելու յե մինչև 15 տոկոսի:

Ուրալում ածխի հանույթը 1942 թվականին հասնելու յե մինչև 25,9 միլիոն տոննի, իսկ տեսակարար կշիռը 1942 թվականին հասնելու յե մինչև 11,1 տոկոսի:

Հեռավոր-Արևելյան Երկրում ածխի հանույթը 1942 թվականին հասնելու յե 9,0 միլիոն տոննի, իսկ տեսակա-

բար կշեռը 1942 թվականին հասնելու յէ 3,9 տոկոսի:
Միջին Ասմարում ածխի հանույթը 1942 թվականին
հասնելու յէ մինչև 4,7 միլիոն տոննի, իսկ տեսակարար
կշեռը 1942 թվականին հասնելու յէ մինչև 2 տոկոսի:

Կովկասում ածխի հանույթը 1942 թվականին հասնելու
յէ մինչև 2,2 միլիոն տոննի, իսկ տեսակարար կշեռը 1942
թվականին հասնելու յէ մինչև 0,9 տոկոսի:

Հնկեր Ստալինը մեր առջև գարց դրեց, վոր հարկավոր
և զարդացնել արդյունաբերությունը Վոլգայի յերկարու-
թյամբ, իսկ այստեղ ածուխ չկա և դրա համար հարկավոր
և զարդացնել Դոնբասի ածխի հանույթը: Դա Զելյովի մոտ
դժուղող շատ լավ անարացիտ է: Մենք սկսել ենք շախտեր
կառուցել և այս տարի հիմնում ենք տասը հանքահոր՝ 1942
թվականին այստեղ մենք պետք ե ունենանք 6 միլիոն տոնն
ածխի կարողությամբ հանքահորեր: Ածխահանք կա կաս-
պից ծովի մոտ, այսպես կոչված Մանդիշլակի ածխահանքը
Ղաղախստանում: Պետք ե զարդացնել այդ ածխահանքը,
վորպեսի ածուխը փոխադրենք Վոլգայով:

Բացի դրանից, յերկարանները ցուցումներ են տվել,
վոր Դոնբասի ածուխը շատ ե մոտենում Ստալինդրավին:
Պետք ե արագացնել Հետախուզությունը և այստեղ դար-
դացնել ածխի հանույթը:

Հնկեր Ստալինն առանձնապես հոգ ե տանում Պեչորայի
ածուխը զարդացնելու համար: Պեչորայի այդ ածուխը
պետք ե զարդացնել Հյուսիսի և Լենինդրավի համար, կա-
ռուցելով այստեղ Ռւստա—Պեչորա յերկաթուղին և այդ
ածուխն ու նավթը (այստեղ նավթ կա) փոխադրել յերկ-
րի կենտրոնը՝ Լենինդրավ: Այժմ մենք ածուխը Դոնբասից
փոխադրում ենք դեպի ծայրագույն Հյուսիսը և Արխան-
դելսկ: Իհարկե, շատ ավելի հեշտ կլինի այստեղ փոխադրել
ուխտո-պեչորյան ածուխը:

Յերբորդ հնդամյակում նոր շրջանների յուրացման ու
զարդացման հետ միասին, հանքահորեր են կառուցվելու և՝
Դոնբասում, և՝ կուղրասում, սակայն Դոնբասի տեսակարար
կշեռն ածխի հանույթի բնագավառում նվազելու յէ:

Մինչև 1942 թվականը (ներառյալ) մենք Վարելանյու-
թային Արդյունաբերության ժողկոմատի դժով պետք ե կա-

ռուցենք և դործարկենք 573 հանքահոր՝ 166,5 միլիոն տոնն
կարողությամբ, այսինքն՝ ավելի քան յերկու անգամ շատ,
քան յերկորդ հնդամյակում:

Յերբորդ հնդամյակում ծրագրված ե կառուցել և դոր-
ծարկել հետևյալ թվով հանքահորեր, ըստ ավարտմանների՝
Դոնբասում՝ 157 հանքահոր՝ 58,8 միլիոն տոնն կարողու-
թյամբ. Անկառագում դորչ ածխի համար՝ յերեք հանքահոր՝
600 հազար տոնն կարողությամբ. Հյուսիսային կովկասում
և Անդրկովկասում՝ 12 հանքահոր՝ 1,95 միլիոն տոնն կա-
ռողությամբ. Մերձմուկովյան ավարտման՝ 121 հանքահոր՝
37,7 միլիոն տոնն կարողությամբ. Ուրալում՝ ընդամենը
60 հանքահոր՝ 18,63 միլիոն տոնն կարողությամբ. Ուրա-
նինբարյան ավարտման՝ 55 հանքահոր՝ 6,0 միլիոն տոնն
կարողությամբ. Կուղրասում և Խակասիայում՝ 39 հանքա-
հոր՝ 13,11 միլիոն տոնն կարողությամբ. Կարագանդայում
— 19 հանքահոր՝ 7,75 միլիոն տոնն կարողությամբ. Վու-
տուկոլում՝ 21 հանքահոր՝ 2,54 միլիոն տոնն կարողու-
թյամբ. Վոստիբուգոլում՝ 5 հանքահոր՝ 2,34 միլիոն տոնն
կարողությամբ. Յուրեկինյան ավարտման՝ 10 հանքահոր՝
2,55 միլիոն տոնն կարողությամբ. Ասիավինում՝ 5 հանքա-
հոր՝ 0,8 միլիոն տոնն կարողությամբ. Դալուգոլում՝ 34
հանքահոր՝ 7,81 միլիոն տոնն կարողությամբ. Միջին Ասի-
այում՝ 32 հանքահոր՝ 5,97 միլիոն տոնն կարողությամբ:

Սա ծանր ինդիք է: Այստեղ անհրաժեշտ կլինի կու-
ռակցական կաղմակերպությունների ողնությունը: Ել չեմ
խոսում կառավարության և կուռակցության կենարունական
կոմիտեյի ողնության մասին, վորը ցույց է տրվում այս
բարդ ինդիքի լուծմանը:

Զկա և չի կարող լինել անդամ փոքրագույն ածխային
ցրջան, վորը մենք աչքաթող արած լինենք:

Պետք ե ամեն կերպ զարդացնել տեղական ածուխների
հանույթը և դրան պետք ե ձեռնամուխ լինեն տեղական
խորհրդային որդանները:

Մենք պետք ե արագացնենք հանքահորերի կառուցու-
մը: Կառուցենք դրանք վոչ թե 5—6 և 8 տարիների ըն-
թացքում, ինչպես առաջ, այլ տասն ամսում կամ մի տա-
րում:

Ածխարդյունաբերության հետևյալ կարևորակույն պլոր-
լեմն ե մեքենայացումը: Հայտնի յե, թե վորքան ծանր և
հանքափորի աշխատանքը: Մեքենայացումը, հեշտացնելով
հանքափորի աշխատանքը, բարձրացնում և նրա արտադրո-
ղականությունը:

Ածխարդյունաբերության մեջ քիչ մեխանիզմներ չկան: Սակայն չի ապահովված մեքենայացման կոմպլեքսայնու-
թյունը: Դոնքասում, մինչդեռ բարձր մակարդակի յե հա-
սել ածխահատման մեքենայացումը (94,6 տոկոս), խիստ
հետ ե մնացել ածուլը դիմավոր ճանապարհներով վերև
վորսադրելու գործը (ձիով ե վորսադրվում 56,5 տոկոսը),
կիտելը և դիղելը (բոլորովին չի մեքենայացված), յերկա-
թուղային վագոններ բեռնելը (ձեռքով ե բեռնվում մինչև
30 տոկոսը):

Մեքենայացման այդ կոմպլեքսայնությունն ապահովե-
լու համար անհրաժեշտ են ելեկտրոքարշեր, հարկավոր ե
յուրացնել կոմբայնների, կիտող մեքենաների արտադրու-
թյունը:

Կարեռագույն խնդիր ե հանդիսանում գործող հանքա-
հորերի և մեխանիզմների սարքավորման ավելի լավ յու-
րացումը:

Սակայն վորպեսզի հորատող մեքենայի մեքենավարը,
հանքահատը, ամրացնողը կարողանան բարձր արտադրողա-
կանություն տալ, հարկավոր ե նրանց համար ժամանակին.
պատրաստել աշխատանքային տեղը՝ լավան, դարոյը: Հան-
քահորում կատարվող նախապատրաստական աշխատանքնե-
րը՝ շտրեկներ, թեքումներ և այլն բանքալը, ըստ եյության,
հանքահորի վերաբերադրումն ե:

Ածխարդյունաբերության մեջ մենք ունենք հաղարավոր
շիքանալի առաջալոր ստախանովական հանքապորձներ, վո-
րոնք արդեն կատարում ու դերակատարում են նաև արտա-
դրանքի նոր նորմաները: Սակայն մի չարք հանքահորերում,
չնայած վոր ունենք մեծ թվով անհատապես լավ աշխատող
ստախանովական հանքահատներ, ամրացնողներ և այլն, ամ-
բողջ հանքահորի աշխատանքն ածիրի հանույթի ասպարե-
զում ցածր արդյունք ե տալիս և մի չարք հանքահորեր
նույնիսկ չեն կատարում պլանը: Նրանց աշխատանքը դեմ ե

առնում դործի վատ կազմակերպմանը, կարգավորված աշ-
խատանքի բացակայությանը: Յեկանական այդ կարգավորված
ծությունը պետք է ապահովի ցիկլայնության դրաֆիկը, վո-
րի առանցքն ե կազմում հորատող մեքենան, ավելի ճիշտ՝
նրա պառույթը (մի հատումից մինչև յերկրորդ հատումը
սկսվելը): Պետք է միջոցներ ձեռք առնել, վոր հորատող
մեքենան ավելի շատ ցիկլիք (պառույտներ) գործի:

Ածխարդյունաբերության ասպարեզում վերջին տարին
ստախանովայան շարժման ձեռք բերած փորձի մեջ ամենա-
արժեքալորն ե այն, վոր մենք ունենք մի շարք հանքա-
մասներ և նույնիսկ հանքահորեր, վորոնք կարողացան ասլա-
ռովել աշխատանքի կոմպլեքսայնությունը, ավելացնել ցիկ-
լիքը և ածիրի հանույթը, վոր մենք ունենք ստախանովայան
կոլեկտիվ ցիկլիք աշխատանքի այնպիսի աչքի ընկնող կադ-
րակերպիչներ, ինչպիսիք են Շաշացկին, Գվոզդիբկովը,
Կորնիչները և ուրիշները:

Հոկտյական հետաքրքրություն ե ներկայացնում Դոն-
բասի Սյնեհնյան-անտրացիտ տրեստի՝ Ստալինի անվան հան-
քահորի աշխատանքի փորձը, վորտեղ աշխատում եր Շա-
շացկին: Ստալինի անվան հանքահորն առաջ վատ եր աշ-
խատում: Այստեղ տիրություն ելին անում վնասարարները:
Այժմ դա ամենասուզավոր հանքահորերից մեկն ե, վորի
կոլեկտիվը պարգևատրված ե Լենինի շքանշանով:

Շաշացկին 350 մետր յերկարություն ունեցող եր վիթ-
խարի լավացում կարողացավ որական մի ցիկլ կատարել և
հանույթը հասցնել որական մինչև հազար տոնն ածիրի՝ մի-
ւավայից: Շաշացկուց հետո սկսեցին շատ ավելի լավ աշ-
խատել նաև հանքահորի մյուս մասնակիցները:

Ամբողջ կոլեկտիվի ցիկլիկ, կարգավորված աշխատան-
քի հետևանքը յեղավ ստախանովականների ու ածիրի վար-
պետների հոկայական աճումը:

1936 թվականին հանքահորում ածիրի վարպետի կոչում
ունելին միայն 38 հոգի, 1937 թվականին վարպետի կոչում
ստացան 328 հանքահոր: 1938 թվականին վարպետի կոչում
ստացան արդեն 602 հոգի և 1939 թվականի հունվարին՝
730 հոգի:

Բարձր ցիկլայնությունը վոչ միայն նշանակում է ածիրի

Հանուլյթի, ավելացում, այլև հանքավորերի ունեսորության աճում: Աճեց աշխատավարձը: Ստալինի անվան նույն հանքահորում միջին աշխատավարձը 1934 թվականին կազմում եր 220 ոռորդի, 1938 թվականին՝ 552 ոռորդի:

Հորատող մեքենայի մեքենավար ընկ. Կրետոոլի միջին աշխատավարձը կազմում և ամսական 3000 ոռորդի: Այդ հանքահորում հորատող մեքենայի մյուս մեքենավարներն ամսական վաստակում են 2000 ոռորդուց ավելի:

Այստեղ կառուցված են ակումբ, մսուր, մանկապարտեզներ:

Եսու ուղղակի կամեմ, վոր այնուղ միայն մեկ լուրջ ճգնաժամ կա՝ բնակարանները հերիք չեն անում ընտանիքավորների ավելացող թվի համար: Ամուսնությունների թիվն անընդհատ ավելանում է: Այդպես, 1935 թվականին ամուսնացակ 81 դույզ, իսկ 1938 թվականին՝ 184 դույզ:

Ավելանում և նաև ծննդաբերությունը: 1935 թվականին հանքահորի լեռնադործների մոտ ծնվեց 517 յերեխ: 1938 թվականին ծնվեց արդեն 860 յերեխ: (Ծափահարություններ):

Ինչպես յերեռում է, նրանք ցիկլայնությունն ու կոմպլեքսայնությունը գործադրում են իրենց գործունեյթյան բոլոր բնադրյաններում: (Ծիծառ, ծափահարություններ):

Ի՞նչն ե խանգարում ցիկլերի թվի ավելացմանը բոլոր հանքահորերում: Արտադրության անբավարար կազմակերպումը, պարագուրդները, պատահարները: Պատահարներից մենք չառ կորուստ ունենք:

Անհրաժեշտ է լրիվ ողտադրծել ածխի հանուլյթը բարձրացնելու բոլոր հասարակորությունները, վորոնք թաղված են ցիկլերի թվի ավելացման մեջ, մեխանիզմների ողտադրծման բարելավման մեջ, մասնավանդ վոր արդեն այժմ սկսվել ե բանվորների սեղոնային տարակնացությունը, վոր սովորական և ածխադրյունաբերության մեջ:

Անհրաժեշտ է անհատականորեն աշխատանք կատարել բանվորների մեջ, միջոցներ ձեռք առնելով հանքահորերին նրանց ամրացնելու համար (անհատական պայմանագրեր), ընդարձակել բնակարանների շինարարությունը: Յերկրորդ՝ բանվորների հասարակոր տարագնացությունը կանխելու հա-

մար հարկավոր է ավելի լավ կազմակերպել գործը և ամրապնդել կարգապահությունը, Հիմնելով ԽՍՀՄ-ի Ժողովությունի, Համեր(բ)կ կենտրոնի և Համեկե 1938 թվականի 28-ի վորոշման անշեղ կատարման վրա:

Վերջին ըրմանում ածխադրծները բարձրացել են:

Ածխադրյունաբերության մեջ կադրերը թարմացվել են: Դա մեր ուժն է, սակայն նրանցից գեռ վոչ բոլորը տիրապետել են կազմակերպչական արդիստին:

Ընկեր ածխադրծներ, Կառավարությունը, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ, ձեզ պարզեատրեց: Ընկեր Ստալինը գիտե հանքադրծի աշխատանքի դժվարությունները և նա հոկայական հարգանքով ե վերաբերվում հանքադրծին, նրա աշխատանքին: Պարզեատրված են մեծ թլով ածխադրծներ, սակայն այդ հանդամանքը հսկայական պարտականությունները և դնում ածխադրծների վրա: Հանքադրծներն ամուր, վտահակ, առույդ մարդիկ են: Շատ են այնպիսի տաղանդավոր նոր մարդիկ, վորոնք տալիս են 3—4 ական նորմա: Կան շատ հիանալի ստախանովականներ: Հարկավոր ե, վոր նրանք այս ամառ տեղի չտան: Թող նրանք այս ամառ յուրացնեն յերկաթուղայինների տված գասը, վորոնք արագդրեն չտվեցին ձմեռվա յերկու տասնուրյակի դժվարություններից հետո, վորոնք կապված են ամբողջ Միության մեջ հանկարծակի վրա հասած դաժան սառնամանիքների հետ, կազմակերպեցին մրցություն, վորի հետևանքը յեղալ այն, վոր ձմեռը նրանք վատ չաշխատեցին, իսկ մի շարք յերկաթուղիներ աշխատեցին հիանալի փետրվարի պլանը գերակատարվեց: Յերկաթուղիները ձմեռվա պայմաններում յերբեք այնքան չեն բեռնել, վորքան այս սարի և՛ ըստ քանակի, և՛ ըստ վորակի, մասնավորապես որական 16 հազար վագոն ածուլ: Յեթե յերկաթուղայինները ձմեռը իրենց ձիու տվին ու դիմացան, ապա ածխադրծները պետք ե դիմանան ամառվա ու գարնան պայմաններին: Պետք ե, վոր այդ բնադրյանությունը միջների ու հանքադրծների միջների: (Ծափահարություններ):

Վառելանյութային-եներգետիկ բալանսի մեջ մեծ ռեզերվ է հանդիսանում գազային արդյունաբերությունը: Դա վերի և հանդիսանում գազային արդյունաբերությունը:

արդյունաբերության մի նոր ճյուղ է, վորը մեծ ապագա ունի: Նա, յեթե կարելի յե այսպես առել, կոմունիստական հասարակության արդյունաբերությունն է:

Մենք մեր առջև խնդիր ենք դրել ստեղծել, վորպես նոր ճյուղ, գաղային հզոր արդյունաբերություն, շահագործման մեջ մտցնելով բնական գաղերի հանքավայրերը, լայն զարգացնելով ածուխների ստորերկրյա գաղիֆիկացիան և վառելանյութի տեղական տեսակների գաղիֆիկացիան: Ծրագրված ե հետախուզել և յուրացնել գաղավայրերը կենտրոնական շրջաններում, Միջին Վոլգայի, Ռուրաբինայի շրջաններում:

Հատուկ ուշադրություն ե նվիրվում ածխի ստորերկրյա գաղիֆիկացիային, վորը, լենինի արտահայտությամբ, «արդյունաբերության մեջ հեղաշրջում» և առաջացնում:

Հնկեր Ստալինն այժմ հատուկ ուշադրություն ե նվիրում այդ գործին:

Ստորերկրյա գաղիֆիկացիայի Եյությունն այն է, վոր ածխի եներգիան վերածում են վառվող դաղերի եներգեայի, անմիջականորեն ածխածերտի բռնած տարածության բնական պայմաններում: Ածխաշերտի ընկած վայրում յերկրի յերեսից անց են կացնում յերկու կամ մի քանի հորեր, վորոնք միացվում են իրար հետ հորիզոնական անցքով: Հորերից մեկի մեջ գաղ ե մղվում (ոդ, դոլորչի, գոլորչու և թթվածնի խառնուրդ և այլն), վորն անցնելով վառված ածխաշերտի յերկարությամբ (հրային զարոյ), վերածվում է վառվող գաղի, վորը դուրս ե գալիս հարեան հորից: Ածխի ստորերկրյա գաղիֆիկացիայից ստացված դաղերը կարելի յե ոգտագործել՝ ա) եներգետիկ նպատակներով, վորպես գաղակերպ վառելանյութ, այդ թվում նաև գաղային ավտոմորիների ու գաղոմուտորների համար, բ) տեխնոլոգիկ նպատակներով, վորպես հումք՝ քիմիական արդյունաբերության համար:

Կապիտալիզմը չեր կարող յուրացնել ստորերկրյա գաղիֆիկացիան՝ նրան բգկառող հակասությունների պատճառով: Այդ ի վիճակի յեղանք անելու միայն մենք: Ստորերկրյա գաղիֆիկացիայի պրոբլեմը մեզ մոտ լուծված է գործնականորեն յուրացված և գոռլովկայի վորձակայտ-

նում, վորի յերիտասարդ տաղանդավոր կառուցողները պարզեատրված են կառավարության կողմից:

Ստորերկրյա գաղիֆիկացիան նշանավոր գործ է: Անհրաժեշտ ե ստորերկրյա գաղիֆիկացիան, վորն աղատում է մարդկանց յերկրի տակը կատարվող ամենածանր աշխատանքից, վերածել փորձնական գործից արդյունաբերության հյուղի: Մի շարք շրջաններ եժանագին վառելանյութ կատանան: Որինակ, Սոսկվան Մերձմուկովյան ածուխներից գաղիկացիան, վորը մենք Սոսկվա կիոխադրենք խողովակներով, փոխանակ հեռվից ածուխ փոխադրելու գեպի Սոսկվա:

Մեծ նշանակություն ունի թերթաքարային արդյունաբերությունը, վորը հանդիսանում է վոչ միայն եներգետիկ վառելանյութ, այլև հիանալի հումք՝ գաղ ու հեղուկ վառելանյութ պատրաստելու համար: Այդ արդյունաբերությունը պետք է զարգացնել և լենինագրադի մոտ, և վոլգայում:

Տորֆի արդյունաբերությունն արդեն այժմ էլ լուրջ գեր և խաղում վառելանյութային բալանսում: Բայց այդ արդյունաբերությունն անհրաժեշտ է ել ավելի բարձրացնել և վոչ միայն տնտեսականորեն, այլև տեխնիկապես, խելչվասկուլը՝ բարոյապես: Մինչև այժմ տորֆարդյունաբերությունը համարում ենին ամենահետամնացը, մասամբ նրա սեղուային բնույթի պատճառով: Բայց այդ ճիշտ չե: Նրա մեջենայացման մակարդակն արդեն 1937 թվականին հասալ 82,8 տոկոսի: Ճիշտ է, մեջենայացման մեջ կոմպեկտայինություն չկա: Քանի վոր տորֆի հանույթը սեղոնաւին բնույթ ունի, անհրաժեշտ է ել ավելի ուժեղացնել այդ մեջենայացումը:

Տորֆարդյունաբերություն ունեցող մարգերն ու յերկըրները՝ իվանովյի մարդը, վորը վատ չի աշխատել տորֆի ասպարեզում, Յարոսլավլի, Սվերդլովի, Սոսկվայի, լենինգրադի և մյուս մարգերը պետք է հատուկ ուշադրություն դարձնեն տորֆի հանույթի վրա:

ԱԱՊԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Նավթի նշանակության մասին ավելորդ ե խոսել: Ամեն մեկը հասկանում է, վոր այժմ նավթը չի կարելի դիտել

միայն վառելանյութային, եներգետիկ տեսակետից։ Ամեն մեկը հաւաքանում է, վոր առանց նավթի տրակտոր ել չկա։ Իսկ քանի վոր տրակտոր չկա, չկա հաց, բամբակ։ Առանց նավթի չկա ավտոմոբիլ, չկա ավտայիտ։

Նավթի հանույթը (նավթագաղի հետ միասին) XVII և XVIII համապատասխան միջև ընկած ժամանակաշրջանում աճեց համարյա 1,5 անդամ, ընդվորում առանձնապես մեծ աճում տեղի ունեցավ Արևելքի նոր շրջաններում։ Բաշնելթում և Պրիկամնելթում։

Նավթահան արդյունաբերության ասպարեզում ևս մեր առջև կանգնած են յերկու կարևորագույն խնդիրներ՝ (ա) զարգացնել նավթի հանույթը մինչև նրա նկատմամբ յեղած պահանջը լրիվ բավարարվելը, (բ) ամեն կերպ զարգացնել նավթի հանույթն Արևելքում, ստեղծել այնտեղ «Յերկրորդ Բագու»։

Մենք նավթ չառ ունենք, մանավանդ նոր շրջաններում, բայց այստեղ նավթի հանույթը դեռ բավականաչափ չի զարգացել։ Մինչդեռ Արգենտինում նավթի պաշարը կազմում է Միության նավթի ընդհանուր պաշարի 29 տոկոսը, այնտեղ հանույթը կազմում է 74,5 տոկոս։ Յեկը, ընդհակառակը, Միության մյուս բոլոր շրջանները, վորոնք ունեն նավթի ամբողջ պաշարի 71 տոկոսը, տալիս են Միության մեջ նավթի հանույթի միայն 25,5 տոկոսը։ Բագվից նավթ ենք փոխադրում հաղարակոր կիլոմետր հեռավորությամբ, մինչդեռ նավթ կա հուլուրուսանում, իշխայելոյնում, Սիզրանում և Արևելքի մյուս շրջաններում։

Նավթի պրոբլեմը լուծելու համար ծրագրված է մինչև 1942 թվականի վերջերը հում նավթի հանույթն ավելացնել 1,6 անդամ, վորը հասարակություն կտա լրիվ բավարարելու մի շարք պրոդուկտների պահանջը։

Նավթահան արդյունաբերության զարգացումն ընթանում է գլխավոր խնդրի կատարումն ապահովելով՝ Արևելքում «Յերկրորդ Բագու» ստեղծելու տեսանկյունով։

Պետք է ասել, վոր յերկրորդ համամյակի ընթացքում Արգենտինի նավթի տեսակարար կշիռը բարձրացել է։ Այդ տեղի ունեցավ այն պատճառով, վոր Գրոզնին խիստ հետ մասց նավթի հանույթի առավարելում։ Զարգացնելով նավ-

թի հանույթը Բանդում, մենք միմնույն ժամանակ պետք ենք ուժեղ թափով մշակենք արևելյան նավթահանքերը։

Ստեղծել «Յերկրորդ Բագու»—ստալինյան այդ հրաշալի և հոյակապ լոգունով մենք պետք ենք կատարենք։ Զգալի աճում է ծրագրված եմբայի, իշխայելոյի, Տուբաղամի, Սիզրանի, Մերձկամայի, Թուրքմենական ԽՍՀ-ի, Ռուբեկական ԽՍՀ-ի, Արևելյան շրջանների տեսակարար կշիռը ներկայիս 6,5 տոկոսից 1942 թվականի վերջերին հասնելու յե 21,8 տոկոսի։

Մենք, որինակ, ուշացրինք Ռուֆայի գործարանի կառուցումը և գրանով ձգձգեցինք իշխայելոյի նավթի հանույթը։ Յես պետք է ասեմ՝ կարիք յեղավ, վոր ընկեր Ստալինը հատուկ ճնշում գործադրեր, վորպեսզի ամբողջ թափով ծագալիքը նավթի հանույթը իշխայելոյնում ու արագացվեր Ռուֆայի գործարանի կառուցումը և այժմ զարկ արվեր այդ գործին։

Անհրաժեշտ և նաև ուժեղացնել նոր նավթահանքերի հետախուզման ու յուրացման աշխատանքը Վրաստանում, Ռէկրաֆինայում և այն բոլոր մարզերում, վորտեղ կամ նավթի ու գազի նշաններ ունեցող մի շարք կետեր։ Փորումը հակայական նշանաժողովուն ունի նավթի համար։ Առանց փորման չկա հորերի թվի աճում, հետեւարար չկա հանույթի աճում։ Մենք փորման մեծ ծրագիր ենք վերցնում։

Արևելքում «Յերկրորդ Բագու» կառուցելու համար հարկավոր է հակայական շինարարություն ծավալել և այդ գործում պետք է լուրջ ոգնություն ցույց տալ Արևելքի նավթային շրջանների կուսկազմակերպություններին։ Յես պետք է ասեմ, վոր ընթացիկ ինչպիսի խափանումներ ել ունենա Բաղդի նավթարդյունաբերությունը, Բագվի կուսկազմակերպությունը և Աղբբեկանի Կ(բ)Կ-ի կենտրոնը ապրում են նավթի կյանքով, պայքար են մզում նավթի համար, Պետք են, վոր արևելյան շրջանների կուսկազմակերպությունները նույնպես պայքար մղեն նավթի համար, ինչպես բագվեցիները։

Փորման ասպարեզում մեր առջև կանգնած է փորման տեխնիկան ու կազմակերպումը բարելավելու խնդիրը։ Փոր-

ժան մեջ, ովելի քան նախթարդյունաբերության մյուս ճյուղը գորում, գոյություն ունեն հակամեքենայացման հետամնաց տրամադրություններ:

1938 թվականին փորման պլանը չի կատարված։ Այս մենք փորման մեջ բարձրացրել ենք նորմաները։ Պետք է վերացնել փորման դործում պատահող աշարժաները, վորքան կարելի յե շուտ արմատացնել տուրքինային հորատումը։ Պետք է վորքան կարելի յե շուտ վերացնել հորատման հետ մնալու։

Նալթահորերի շահագործման աստղաբեզում մեծ հսկայի լորություններ կան դործը բարելավելու համար:

Այստեղ պլիսալորն ե՝ կազմակերպել հորերի տեխնոլոգիական աշխատավայրը, վորս ապահովի նրանց մշտական ու անընդհատ աշխատանքը և նավթի առավելագույն հանումը:

Յերբ յես Գրողնի յեկա և տեսա, վոր նավթահօրը տա-
լիս ե ինչ-վոր կես տոնն նավթ, ինժեներներին ու յերկրա-
բաններին հարցը ինչու չի կարելի ալելի տալ: Ասում
են՝ տեխնոլոգիկ ռեժիմ:

Այս ժամանակ յես նըանց ասացի՝ յեթե մենք վոչչեց-
րինք ցարական ռեժիմը, ապա մի՞թե չենք կարող բարելա-
վել ձեր տեխնոլոգիկ ռեժիմը։ (Ծիծաղ, յերկարատև ծա-
փահարություններ) :

Զեռնամուխ յեղանք, բարելատիեցինք և յերբ հսկողության համար յերկրաբան դրինք, նույն այդ հորը սկսեց յերեք տոնն նավթ տալ: Հորն ունի ավազով կեղտոտալելու հատկություն: Նրան պետք է մաքրել, իսկ յեթե չմաքրեն, իհարկե նավթ ել չի դուրս գա: Բայց դեռ վատ են մաքրում հորերը, վատ են խնամում դրանք: Ավելի շատ հույս են դնում շատրվանի վրա: Փորում են հորը, սկզբում նավթը խփում ե շատրվանի պես, վո'չ պոմպ ե պետք, վո'չ կոմպրեսոր, վո'չ ել խնամք, մի հորը տալիս ե 300 տոնն: Այդ լավ և հաճելի յէ: Սակայն անկայուն հանույթի վտանգը այն ե, վոր այդպիսի հորն արագորեն կորցնում ե իր կարողությունը և հանույթը չափազանց անկայուն բնույթ ե կրօնք:

Սենք պետք է սկսնք գործադրել նավթահորերի կըրկ-
նամեն աշառողծման ամերիկյան պրակտիկան։ Նավթաշեր-

տերի ծորումը խիստ բարձրացնելու համար ԱՄՆ-ում գործադրվում են յերկրորդ անգամ շահագործելու մեթոդներ, վորոնց ելությունն այն է, վոր այսպես կոչված «Հյուծված» շերտի մեջ ճնշմամբ, իսկ յերեմն բարձր ջերմաստիճանի տակ, արհեստականորեն մտցվում են գաղ, ող, ջուր և այլն։ Դրա չնորհիվ ԱՄՆ-ի միջանի նավթահանքերում ստացվել են նավթի հանույթի մինչև 60 տոկոս աճ։

Կրկնակի շահագործման այն փորձերը, վարոնք կատար-
վեցին մեզ մոտ Մայնեվթում, շատ հաջող դուրս յեկան:

Կը կնակի շահագործման լայն դորժադրումը հնարավո-
րություն կտա խիստ ավելացնելու նավթի հանույթն այս-
պէս կոչված «Հյուծված» նավթահանքերից։ Դրա համար,
իհարկե, հարկավոր են կոմպրեսորներ։ Առանց դրանց
սպասելու, անհրաժեշտ ե բարելավել նավթահորերի
խնամքը։

Ընկեր Բաղիքովը ճիշտ ե դնում նավթահանքերին և լեկ-
տրուեներդիս մատակարարելու հարցը։ Մենք անչուշտ ու-
շացրել ենք նոր կայանների կառուցումը, սակայն այն հան-
գամանքը, վոր հանույթի ասպարեզում մենք միքիչ հետ
ենք մնացել, միայն դրանով չի բացատրվում, և վոչ միայն
նրանով, վոր 1938 թվականը ձախող տարի յեր փորման աս-
պարեզում, այլև նրանով, վոր թուլացել եր նավթահորերի
խամքու։

Բոլը կեկյան պանծալի բագվում մենք քիչ չունենք այն պիսի հիանալի առաջավոր մարդիկ, ինչպիսիք են՝ Ռամազանովը, Սուրբրա Գաբրովյան և ուրիշները, վորոնք հիանալի արդյունքներ են ձեռք բերել իրենց նավթահանքերում, հատկապես բարելավելով նավթահորերի աշխատանքի տեսանոլոգիկ ուժիմը, նվազեցնելով պարապուրդներն ու պատահարները:

Քիչ չեն այսպիսի հիանալի որինակելի նավթաշանքեր,
վորոնք ավելացնում են հանուլյթը, մինչդեռ մյուսների մոտ
հանուլյթը նվազում է։ Ուրեմն ի՞նչն ե պատճառը, վոր մի
քանիսի մոտ ավելացում կա, իսկ մյուսների մոտ նվազում,
վոմանց մոտ «փոթորիկ» ե լինում, իսկ մյուսների մոտ
«փոթորիկ» չկա։

Ամբողջ գործը կախված է մարդկանցից և նավթահորե-

րի խնամքը բարելավելուց։ Այդ առանձնապես վերաբերում է Գրոզնիին, վորտեղ աշխատանքն արվելի վատ և ընթանում, քան վորեւե այլ տեղում։ Մենք հույս ունենք, վոր ամրող նավթահան արդյունաբերությունը և Բաղուն, վորպես առաջավոր նավթակենտրոն, կրաստարի փր պարտքը և նոր սատիճանի վրա կրաքարանա։ Նավք վերամշակող արդյունաբերությունը ԽVII և XVIII համայնքում արների միջն ընկած ժամանակաշրջանում նավթի վերամշակումն ալլալացրեց մեկ ու կես անգամ (մի շաբթ գործարաններ աշխատանքի որինակներ են տալիս մեզ)։ Սակայն մեզ ե՛լ ավելի մեծ աճում և հարկավոր։

Նավթի վերամշակումը մինչև 1942 թվականն ընդարձակելու յե ավելի քան յերկու և մի քառորդ անգամ՝ յերկրորդ հնդամյակի համեմատ։ Ամենից ավելի կարենոր պրոդուկտի՝ բենզինի արտադրությունը մինչև յերրորդ հնդամյակի վերջերն ավելացվելու յե 2,8 անգամ։ Խիստ ավելանալու յե պահանջի բավարարումը։

Վճիռ նավթամթերքի և առաջին հերթին բենզինի արտադրությունը խիստ աճելու յե Ռուբրո-Վոլգայում ու Հեռավոր-Արևելյան յերկրում, ինչպես և Միության Յելրոպական մասի կենտրոնական շրջաններում։

Ծրագրված և բենզինի ստացումն ավելացնել վոչ միայն զարդացնելով գուգակցված պրոցեսները նավթի վերամշակող նոր գործարաններում, այլև գոյություն ունեցող գործարաններում, լրիվ որագործելով և վերակառուցելով վերջներս։

Նավթ վերամշակող նոր գործարանները ծրագրված ե կառուցել առավելապես 500-ական տոնն կարողությամբ։ Կետերը դեռ վերջնականապես չեն հաստատված, բայց մոտավորապես ծրագրված ե գործարաններ կառուցել հետեւյալ կետերում։ Միզրանում, Բուգուրուսլանում, Կազանում, Կուրդանում, Զելյաբինսկում, Տուրմազում, Պերմում, Հեռավոր-Արևելյան Յերկրամասում, Արմավիրում, Անդիժանում, Կրասնովոդսկում, թերեւ Ռյազանում և այլն։

Բացի դրանից, ավարտվելու յեն Ռուկում, Ուֆայում, Մուկաչյում ու Մարտովում ներկայումս կառուցվող գոր-

ծարանները։ Մենք, ընկերներ, ինչ դնով ել մինի, պետք ե ավարտենք մանավանդ Ուֆայի գործարանը։

Բենզինի առաջարեղում մենք պետք ե ավելացնենք բենզինի յելուսում և զուգակցված կրեկինդի գործադրումը, մի բան, վոր Ամերիկայում հասուկ զարգացում ե ստացել և վորը բարձրորակ բենզինի տալիս մեզ։

Վառելանյութով ապահովելու գործում մենք պետք ե ամեն կերպ զարգացնենք բարձրորակ բենզինը։

Նոր գործարանների կառուցումը մի շաբթ բարդ խընդիրներ ե դնում մեքենաներության առջև՝ ժամանակին ավահովել նրան բարձրորակ ապարատուրայով ու սարքավորմամբ։

Համառոտակի կասեմ ածխից և թերթաքարերից հեղուկ վառելանյութ ստանալու մասին։ Այդ հարցը մեծ նշանակություն ունի մեր յերկրի համար, նրա հսկայական տարածությամբ, յերպ հարկավոր և հարավից նավթ ու նավթամթերք փոխադրել ամբողջ յերկրի համար։ Բնիեր Ստամբուլը շատ և հետաքրքրում այդ հարցով և առաջադրանք տվեց՝ արհեստական հեղուկ վառելանյութի այդ գործարանների կառուցումն այն շրջաններում, վորտեղ ածուխ կա հեղուկ վառելանյութ վերամշակելու համար, որինակ՝ Զերեմխովոյի ածուխները, Հեռավոր Արևելքի ածուխները։

Վառելանյութային ոլրորդեմը մենք պետք ե լուծենք։ Դրանից ե կախված ժողովրդական տնտեսության նորմայ աշխատանքը։ Իհարկե, մեծ նշանակություն պետք ե ունենա սպառման կանոնավորումը, գիշատչության վերացումը և կարծը ու հեղուկ վառելանյութի վայրագ գերապաման վերացումը։ Այդ գործում պետք ե ովզնեն սպառողներն երենք, վորոնց համար այդ ձեռնաու յե անտհաշվարկի տեսկետից։

Զնայած ածխի ու նավթի գործի դժվարություններին, մենք համոզված ենք, վոր կենտկոմի և անձամբ ընկեր Ստամբուլի ղեկավարությամբ վառելանյութային ոլրորդեմը կուծենք։ Ածխային և նավթային մարզերի ու շրջանների տեղական կուսակցական կազմակերպությունները պետք ե

ուժգին ողնեն մեղ, վորովհետև ածխային ու նալլթային պրոբլեմի լուծումը մեր ամբողջ յերկրի դործն է:

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԿԱՆԳՆԵՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՃՅՈՒՂԵՐԻ ՇԱԼՔԵՐՈՒՄ

Այժմ ինձ թույլ տվիք ավելի մանրամասն կանդ առնել յերկաթուղային տրանսպորտի վրա, քանի վոր յես վորոշ առնչություն ունեմ նրա հետ: (Դահլիճում ծիծաղ):

Կուսակցության XVII համագումարում, ինչպես հիշում եք, յերկաթուղային տրանսպորտի հարցը դրված եր սուբկերպով:

Ընկեր Ստալինը յերկաթուղային տրանսպորտի հետ մնալու մասին ասել եր, վոր՝

«... տրանսպորտն այն նեղ տեղն է, վորին դեմ առնելով կարող ե սայթաքել, ասենք, թերես արդեն սկսել ե սայթաքել մեր ամբողջ եկոնոմիկան և, ամենից առաջ, մեր ապրանքաշրջանառությունը»:

Յերկաթուղային տրանսպորտի հետ մնալու հարցը սուբկերպով դրվել եր ընկ. ընկ. Մոլոտովի, Կիրովի, Որջոնիկիձերի ճառերի մեջ և յերկրի պաշտպանության կապակությամբ ընկ. Վորոշիլովի արտասանած ճառի մեջ:

Յերկաթուղային տրանսպորտի հարցն ստալինյան ինքնազնադատության ամբողջ սրությամբ դնելը հենց, կենտկոմի հաշվետվության մեջ դրված ինդիքները, մոբիլիզացիայի յենթարկեցին յերկաթուղայիններին, վորովհետև մեր կենտկոմի խոսքը դործից չի հեռանում:

Ընկեր Վորոշիլովը յերկաթուղային տրանսպորտի մատին իր ճառն ավարտեց այսպես.

«Ասենք, քանի վոր ընկեր Ստալինը ձեռնամուխ և լինում տրանսպորտին ինչպես հարկն է, ապա այս տեղ արդեն, ընկերներ, կատակը մի կողմ»:

Դա այդպես ել յեղավ: Ամենայն հոգատարությամբ, ռւշադրությամբ ու ողնությամբ ընկեր Ստալինը ձեռնամուխ յեղավ յերկաթուղային տրանսպորտին և ստալինյան հաղթանակները յերկաթուղային տրանսպորտում ապահովվեցին: (Ծափակարություններ):

Առանց ջամագանցության կարելի յէ ասել, վոր կուսակցության XVII և XVIII համագումարների միջն ընկած ժամանակամիջոցում յերկաթուղային տրանսպորտն անցավ պայքարի ու ստալինյան հաղթանակների պանծալի ուղին:

Հատկապես պետք ե ասել, վոր յերկաթուղային տրանսպորտի համար պատմական դեր խաղաց յերկաթուղայինների ընդունելությունն ընկեր Ստալինի և Քաղբյուրոյի մյուս անդամների կողմից կրեմլում:

Յես այստեղ XVIII համագումարի առջև չեմ ասի, թե մենք կատարել ենք այն բոլոր խնդիրները, վորոնք դրվեցին յերկաթուղային տրանսպորտի, մասնավորապես ժամացույցի. մեխանիզմի պես կանոնավոր աշխատանքի նկատմամբ: Այդ բնագավառում յերկաթուղայինների առջև գեռ կա գործունելության մեջ ասպարեզ, բայց ամփոփելով արդյունքները, յես պետք ե զեկուցեմ կուսակցության Համագումարին, վոր յերկաթուղային տրանսպորտը պատվով կատարեց կուսակցության և ընկեր Ստալինի առաջադրանքը:

Որական միջին բեռնումը 1933 թվի որական 51,2 հազար վագոնից 1938 թվին հասավ որական 88,0 հազար վագոնի, այսինքն՝ աճեց ավելի քան 1,7 անգամ, իսկ բեռնարժանառությունը՝ նույն այդ ժամանակաշրջանում 169,5 միլիորդ տոնն-կիլոմետրից հասավ 369,4 միլիորդ տոնն-կիլոմետրի, այսինքն՝ ավելացավ համարյա 2,2 անգամ: Հնդամյակը կատարված ե ժամկետից առաջ:

ԽՍՀՄ-ի յերկաթուղայինները 1938 թվին փոխադրեցին 1,8 անգամ ավելի քարածում, քան 1933 թվին, 2,3 անգամ ավելի մետաղ, մեկ ու կես անդամից ավելի հացահատիկ, 1,3 անգամ ավելի կենդանական յուղ և համարյա 2 անգամ ավելի բուսական յուղ, 3,3 անգամ ավելի ձու, 1,4 անգամ ավելի տեքստիլ: Այս փոխադրումների միջոցով մենք տեսնում ենք ժողովրդի բարեկեցության աճումը: Մենք այժմ հիմնականում բավարարում ենք ժողովրդական տնտեսության կարիքները:

Յերկաթուղային տրանսպորտն այս հաջողությունները ձեռք բերեց ինչպես բուն աշխատանքի ու արտադրության միջների ոգտագործումը բարելավելով, այնպես և յեր-

կաթուղիների արտադրական կարողությունն ավելացնելով, մեծ մասամբ յուրացումը բարելավելով։

Այսպես, 1938 թվին՝ 1933 թվի Համեմատությամբ, բարելավել են շարժական կազմի ոգտագործման հետեւալ չափանիշները՝

ա) բեռնատար պարկի վագոնի շրջապտույտի ժամանակը կրճատվել է ավելի քան յերկու որով։

բ) վագոնի պարապուրդը մեկ տեխնիկական կայարանում համապատասխանորեն պակասել է 4,6 ժամով։

գ) վագոնի պարապուրդը բեռնատար ովերացիայի համար կրճատվել է 9,5 ժամով։

դ) առևտրական արագությունն աճել է ժամում 5,3 կիլոմետրով։

յ) տեխնիկական արագությունն աճել է ժամում 9,6 կիլոմետրով։

զ) բեռնատար պարկի վագոնի որական ժիջին վաղքն աճել է 40,8 կիլոմետրով։

ե) չողեքարշի որական ժիջին վաղքը բեռնատար յերթեկության մեջ աճել է 87,3 կիլոմետրով։

Բերված տվյալները ցույց են տալիս շարժական կազմի ոգտագործման գդալի բարելավումը։ Սոցիալիստական տընտեսության սիստեմը և յերթեկության կաղմակերպման ու կարգապահության անդաման բարելավումն ունեցան այն հետևանքը, վոր մենք ԽՍՀՄ-ում չողեքարշերը, վագոնները, ուղու յուրաքանչյուր կիլոմետրն ոգտագործում ենք ավելի լավ, քան յեվրոպական յերկրները և նույնիսկ ավելի լավ, քան ԱՄՆ-ում։

Սակայն, յեթե չի կարելի ասել, վոր մեր տրանսպորտն աշխատում է առավելացույն կարողությամբ, ապա կարելի յե ասել, վոր տրանսպորտն աշխատում է լարված կերպով, ուստի նյութական ռեզերվները պետք ե անտարակույս ավելացվեն։

Այս տարիների ընթացքում մենք շատ բան ենք կառուցել։ Յես մանրամասն չեմ թվարկի բոլոր կառուցումները, դա չափից դուրս շատ ժամանակ ու տեղ կը բավեր, բայց կասեմ, վոր չահաղործման ենք հանձնել մոտավորապես 5 հազար կիլոմետր նոր յերկաթուղիներ, ավելի քան 8

հազար կիլոմետր յերկարդ ուղիներ, այդ թվում կարիմ-կայա—Խարարովսկի յերկաթուղին, վերակառուցված են մոտավորապես 5 հազար կիլոմետր հին ուղիներ, կապիտալ ու միջակ նորոգման ե յենթարկվել մոտավորապես 100 հայար կիլոմետր ուղի, կառուցված են 30-ից ավելի մեխանիզացիայի յենթարկված բլրակներ և 22 մեխանիզացիայի չենթարկված բլրակ, ավտո-բլրկի բորբոքված սարքավորվել և մոտավորապես 5 հազար կիլոմետր ուղի, կենարունացվել են ավելի քան 10 հազար սաքներ։ «ՖԴ», «ԻԱ», «ՍՌ» և այլն նոր հղոր չողեքարշներ ստացվել են ավելի քան 6 հազար հատ, նոր վագոններ ստացվել են 186 հազար հատ, այդ թվում 101 հազար չորստոնանի և 5 հազարից ավելի մարդատար։ Վագոնային պարկը սարքավորել ենք այտումատիկ արդելակներով, վագոնային պարկի քառորդ մասը սարքավորել ենք ավտոմատիկ կցմամբ։

Կառուցվել են 216 նոր վագոնանորոգման կետեր (ըստ Եյության զործարաններ)։ Վերակառուցվել են մի շաբաթապնդներ ու նորոգման գործարաններ և այլն և այլն։

Այսպիսով, տրանսպորտը տեխնիկական լուրջ կերպով վերակինվել է։

Մենք, իհարկե, չենք կարող ասել, թե ամեն բան արել ենք. մեր առջև բացառիկ կերպով մեծ աշխատանք և ծառացած յերկաթուղային տրանսպորտի բալոր բնադրավառներում՝ նրա հետագա տեխնիկական զինման տեսակետից։

Ամենալուրջն ու կարենը այն է, վոր մենք պետք ե վերակառուցենք գոյություն ունեցող ուղիները։

Ուղին մեղանում, դժբախտաբար, դեռևս շատ ունի հին ու թեթև ռելեքը։ 25 հազար կիլոմետր ուղի մենք արգեն փոխարինել ենք նոր ռելեքով։ Այդ մեծ նվաճում է։ Բայց այստեղ մեր առջև դեռ ամենավիթխարի աշխատանք կա։ Մեր յերկաթուղիների բեռնալարվածությունը մեծապես գերազանցում է Յեվրոպայի ու Ամերիկայի յերկաթուղիների բեռնալարվածությունից։ Դրանից հետեւամ է, վոր ուղին հարկավոր և ամրացնել, վերակառուցել, այն գնել քարե խճանքի վրա։

Հղոր չողեքարշների արմատացումը պահանջում է վերակառուցել մի շաբաթ կամուրջներ։

Շողեքարշային տնտեսության գծով անհրաժեշտ և վերակառուցում; Շողեքարշային տնտեսության մեջ այս տարբիների ընթացքում մենք ունենք մեծ նվաճումներ ինչպես շահագործման, այնպես ել նյութական բազայի վիճակի տեսակետից:

Մենք այս տարիների ընթացքում արմատացրել ենք՝

«ՖԴ» շողեքարշը—նոր հզոր շողեքարշ, վորի քարշով ուժը 17—20 տոկոսով ավելի յէ, քան «Ե» սերիայի շողեքարշինը, նա ունի ժամում 85 կիլոմետր արագություն, մինչդեռ «Ե» սերիայի շողեքարշն ունի ժամում 65 կիլոմետր արագություն.

Իսպիֆ Ստալին («ՓՄ») շողեքարշը—մարդատար շողեքարշ, վորը կարող է ժամում տալ 130—140 կիլոմետր արագություն:

Մենք ունենք հիանալի շողեքարշեր՝ շողու կոնդենսացիայով: (Մյու հեղափոխություն և վոչ միայն շողեքարշային տնտեսության մեջ, այլ և ամբողջ տրանսպորտում: Զամատակարարման սուր պրոբլեմը խիստ թուլանում է կոնդենսացիոն շողեքարշների արմատացմամբ: Այդ շողեքարշի առավելությունն այն է, վոր ցիլինդրից դուրս յեկող շողին բաց չի թողնվում, այլ մտնում է տենդերների մեջ, վորոնեղ, սուսեցման հատուկ սարքի միջոցով, նորից վերածվում է ջրի: Այդ շողեքարշն առանց ջուր վերցնելու անցնում է 1000 կիլոմետր ու ավելի և զգալիորեն պակասեցնում է վառելիքի ծախսումը (20 տոկոսով):

Մենք հնարավորություն ունենք ուժեղացնելու հին շողեքարշները, վործադրելով բուստեր—պահեստի մեքենա: Մենք ունենք շատ զծամասեր, վորտեղ հարկ ել լինում տալու յերկրորդ շողեքարշ, վորովհետեւ շողեմեքենայի ուժը չի բավականացնում: Յեթե գործադրի բուստերը, ապա մեքենավարը, վորը վարում է շողեքարշը, դժվարության դեպքում միացնում է բուստերը—պահեստի մեքենան և գնում է առանց հրիչի, առանց յերկրորդ քարշի: Այդ բացարիկ մեծ նշանակություն ունի:

Մենք շատ նորամուծություններ ունենք շողեքարշային տնտեսության մեջ, մենք դրանք գործադրում ենք, մենք տնտեսում ենք սահանում ամեն բանում:

Ճիշտ այնպես, ինչպես մենք ընթանում ենք շողեքարշների կարողության հետաղա ավելացման գծով, անհրաժեշտ և առավելագույն չափով աճեցնել 4-սունանի վագոնների տեսակարար կշիռը, վորոնք հսկայական առավելություններ են տալիս ինչպես բեռների փոխադրության, այնպես ել մարդկանց տեղափոխության տեսակետից:

Մենք բոլորս հիշում ենք, թե և՛ արդյունաբերությունը, և՛ հանգուցյալ ընկեր Որջոնիկիձեն ինչպես կատարեցին ընկեր Ստալինի առաջադրանքը՝ տրանսպորտին 80 հազար վագոն մատակարարելու մասին: Դժբախտաբար, այժմ վագոնների մատակարարումը ձախողվում է, չնայած վոր մենք ունենք Աւրալի վագոնաշինական մեծ գործարանը:

Գետը և ընդարձակել ողատֆորմների, գոնզոլների, խոպակերների արտադրությունը: Վնասարարները փչացրին խոպակերը: Նրա կոնսորուկցիան հարկավոր և ուղղել, բայց այն արտադրել: Հարկավոր և կառուցել սառցարան-վագոններ՝ սննդամթերք փոխադրելու համար, վորի քանակն ավելի ու ավելի յէ աճում (յուղ, կտթ, ձու, միս): Անհրաժեշտ և ավելացնել ցիստերների արտադրությունը, վորովհետեւ վառելիքի փոխադրության չափն այժմ այն չէ, ինչ 1932—1933 թվականին, յերբ ՄՏ կայաններն ավելի քիչ երին:

Ինքնըստինքյան հասկանալի յէ, վոր միաժամանակ անհրաժեշտ և չարունակել վագոնների սարքավորումն ավտոմատիկ կցմամբ, վորովհետեւ կուսակցության XVL համագումարի վորովհետեւ դեռ կատարված չէ: Յերբորդ հընկամատիմ անհրաժեշտ և ավտոմատիկ կցմամբ սարքավորել առնվազն 300 հազար բեռնատար վագոն և ավտոմատիկ արշելակներով՝ առնվազն 200 հազար վագոն:

Ինչ վերաբերում է մեր թողարկունակությանը, վորն ովալիորեն աճել է, ապա հարկավոր և ասել, վոր մենք ովհետք և կառուցենք նոր յերկաթուղիներ: Մենք բավականին շատ նոր յերկաթուղիներ ենք կառուցել, սակայն այդ, այնուամենայնիվ, անբավարար է: Մենք սկսել ենք կառուցել Բայկալ-Ամուռյան մադիստրալը: Մենք կառուցում ենք Կարտալի—Ակմոլինսկ յերկաթուղին՝ Կարտալանդայի ածուխը փոխադրելու համար: Այդ մի մասն է Ստալինսկ—Մագնի-

տողորսկ մեծ մագիստրալի, Մագնիսկայից մինչև հայետ կուզբասի վրայով:

Հազարաստանցի ընկերներն առհասարակ չեն կարող պանդատվել յերկաթուղիների կառուցումից, նրանց մոտ յերկաթուղիներ չառ են կառուցված: Կարտալի-Ակմոլինսկի յերկաթուղին մեղ համար կհեշտացնի յերթեեկությունը կուզբասից մինչև Ռուբալ: Մենք բեռներ ենք փոխադրում Հեռավոր Արևելք, և բեռներ ենք փոխադրում կուզբասից դեպի Ռուբալ և Ռուբալից կուզբաս, մի բան, վոր այդ գծամասում լարվածություն և ստեղծում: Թողարկումակության տեսակենից մենք գժվարություն ունենք նաև Հաբավից գեղի Արևելք՝ Բալաշով՝ Պենզա՝ Վալույկայի վրայով կատար փող փոխադրության ասպարեզում: Անհրաժեշտ և կառուցել Հըլլար՝ Աստրախան յերկաթուղին: Դրանով իսկ, մենք Հյուսիսային-Կովկասյան ու Բադի նավթը կազմաենք Բալաշովյան ուղղությամբ պատույտ գործելուց և կը ընդառնուի դեպի Արևելք: Մեր առջեւ մեծ աշխատանք և ծառացած թողարկումակությունը պաշտպանության նպատակներով ավելացնելու ուղղությամբ:

Մենք պետք են կառուցենք յերկրորդ ուղիներ, քանի վոր մեղ մոտ կան բավականաչափ միուղի գծեր: Հատկապես կարենք են յերկրորդ ուղու կառուցումը Ռուսկից Մոսկվա՝ Սվերդլովսկի վրայով: Մենք մեծ գժվարություններ ենք կրում անտառանյութի փոխադրության ասպարեզում, վարովհետեւ անտառանյութ ենք փոխադրում Ռուբալից, Արխանցկից, Սիբիրից: Մենք սկսել ենք յերկրորդ ուղիներ անց-կացնել Ռուբալում և Արխանցկելսկի յերկաթգծում: Այդ մեղ համար զգալիորեն կհեշտացնի անտառանյութի փոխադրությունը:

Տվյալ մոմենտին հատուկ սրությամբ ծառանում են կայրանների հարցը: Մեղ մոտ հաճախ գծամասի (կայրանից մինչև կայարան) թողարկումակությունն ավելի մեծ է, քան թե կայարանը կարող են վերամշակել: Առաջ գնացքներում եր 50-ական վաղոն, այժմ՝ մինչև 85 վաղոն, իսկ գատարկ՝ մինչև 100 վաղոն: Դրա հետևանքով, ժամանակ գնացքը հարկ են լինում բաժանել յերկու մասի: Այդ

րանը վերացնելու համար անհրաժեշտ են յերկարացնել կայրանային գծերը:

Այստեղից եկ բղխում են կայարանների վերակառուցելու և նրանց թողարկումակությունն ավելացնելու անհրաժեշտությունը:

Տրանսպորտում կուտակվել են չառ դիսպրոպրոցիաներ թողարկության ասպարեզում, քանի վոր չկատնախռության հիմնական ճյուղերի համաչափ վերակառուցում: Ռուսիակ, թողարկումակությունը գծամասերում ավելի մեծ է, քան թե կայարանի, դեպոյի կամ ջրամատակարարման վերամշակող կարողությունը:

Դիսպրոպրոցիան անդրադառնում են ամեն մի ձեռնարկության վրա, բայց տրանսպորտի վրա նա չառ ավելի ուժեղ են անդրադառնում, քան վորեւ այլ ձեռնարկության վրա: Գնացքների յերթեեկության ամենափոքր գանդաղումը վոչ միայն մեկ յերկաթուղում, այլ թույնիսկ մեկ կայարանում, իսկույն անդրադառնում են բոլոր յերկաթուղիների վրա:

Ահա՝ թե ինչու մեր առջեւ խնդիր և ծառացած՝ մշակելու վերակառուցման միասնական տեխնիկական պլան, իկվիտացիայի յենթարկելու վերակառուցման մատնանշված դիսպրոպրոցիան և դրանով իսկ ավելացնելու թողարկումակությունը:

Թողարկումակությունն ավելացնելու գործում մեծ դեր պետք են խաղաղ հաղորդակցման սիստեմի և սլաքային տընտեսության վերակառուցումը:

Յերկաթուղու ցանցում կան մեծ քանակությամբ սլաքներ: Մենք կարող ենք և պետք են անտարակույս կենտրոնացնենք սլաքները ինչպես ելեկտրական, այնպես և մեխանիկական կենտրոնացմանը: Մենք կստանանք վոչ միայն տնտեսական եֆեկտ, այլև կավելացնենք յերթեեկության անվտանգությունը: Ալաքավարը մեղ մոտ կվերածվի մեխանիկի:

Ժեղլային և հեռագրական սիստեմը կիրառելիս չի կարելի կայարանից յերկրորդ գնացքը ճանապարհել այնքան ժամանակ, մինչև վոր տեղ չհանի դրանից առաջ ուղարկված գնացքը: Դա հաղորդակցության բավականաչափ հնա-

շած սիստեմ է: Մինչդեռ ժեղացին սիստեմը մեզանում դեռ բավականաչափ տարածված է:

Հաղորդակցության առավել կատարելագործված սիստեմն և ավտոբուզիբովվկան, վորոշ գեպքերում՝ կիսաավտոբուզիբովվկան:

Դրա հետ միասին մենք պետք ե տրանսպորտում արմատացնենք այնպիսի մի նոր, հիմնալի տեխնիկա, ինչպիսին և գիտական կենտրոնացումը և ալտուստոսովը:

Դիսպետչերային կենտրոնացումը հնարավորություն և տալիս զնացքների յերթեկությունը կառավարել մեկ կետից, մեկ անձնավորության միջոցով, մի քանի ասանակ կելումետք հեռավորությունից: Թողարկունակության և յերթեկության արագության եֆեկտիվությունը պահանջեն, քան ավտոբուզիբովվկայի ժամանակ: Հաստիքների տըստեսումը կիսակայարաններում և փոքր կայարաններում կազմում և կանգառման յուրաքանչյուր կետին 8 մարդ:

Խորտակումների դեմ պայքարելու գործում պետք է ավելի լայնորեն գործադրել ավտոստոպղը. դա ներկայացնում և մի ավտոմատիկ ապարատ, վորոն արգելակում և դնացքը, յեթե նա անցնում է փակ ազդանշանը, կամ յեթե ուղղու վրա վորեն խոչընդուռ կա զնացքի յերթեկության համար:

Այդ ամբողջ նոր տեխնիկան մենք պետք ե յերկաթուղային տրանսպորտում արմատացնենք վորքան կարելի յեավելի լայն չափով:

Պաշտպանական աշխատանքի դժով մենք քիչ բան չենք արել: Բայց մեր առջև գեռ մեծ խնդիր է ծառացած զանազան տեսակ պաշտպանական կառուցումների շնաբարության դժով: Մենք հույս ունենք, վոր այդ խնդիրը հաջողությամբ կիրականացնեք: Այս հաշվետու ժամանակաշրջանում մեր յերկաթուղային տրանսպորտը ցուց տվեց, վոր նա ժողովրդական տնտեսության փոխադրումներն ապահովելու ինդիրը գլուխ ե բերել: Հիմնականում, առանձին բացառություններով, որինակ, անտառանյութի փոխադրման ասպարեզում, մենք բավարարում ենք մեր յերկը պահանջները:

Ես պետք ե հավաստիացնեմ համապումարին, վոր յերբ

պահանջների, մենք գլուխ կբերենք նաև պաշտպանական բեռների փոխադրության խնդիրը: Յերկաթուղիների պատճառով գործը չի խանգարվի: Անհրաժեշտության դեպքում մենք մեր կարմիր բանակը կապահովենք անհրաժեշտ ամեն բանով, ամեն ինչ կիրխալրենք ժամանակին, վորպեսզի այն, ինչ մենք կիրխալրենք, կարմիր բանակը թնդանոթների խողավակներից, ինքնաթիւններից ուղղի գետի թշնամիները, այսուեղ, վորտեղ հարկավոր կլինի ջախճախիել նրանց: (Բուռն ծափակարություններ):

ՅԵՐԿԱԹՈՒՂԻՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատիկ առջեմեծ խնդիր և ծառացած՝ մարդատար փոխադրումները բարելավելու դժով: Մենք ունենք մարդատար փոխադրումների ավելացում: Յեթե 1933 թվին փոխադրված և յեղել 927 միլիոն մարդ, ապա 1938 թվին փոխադրվել ե 1.177,5 միլիոն մարդ: Այդ հարցը հատկապես սուր կերպով ծառացակ քաղաքամերձ դնացքների ժամանակին ժամանելու կապահպությամբ: Գետը և համապումարին զեկուցեմ, վոր Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատիկ ժեղանակը ծեռը առավ մի շարք ինչպես տնտեսական, այնպես և կաղմակերպական միջոցներ, վորոնք ապահովեցին մերձքաղաքային դնացքների ուշացումների խիստ կրծատումը:

Մենք ծրադրել ենք մարդատար փոխադրումների աճում 1937 թվի 1.142,7 միլիոն մարդուց մինչեւ 1.463 միլիոն մարդ՝ 1942 թվին: Գլխավորը ուղևորների սպասարկման բարելավումն և և դնացքների ուշացման վերացումը: Այդ եր հերթին գեմ և առնում թողարկունակությանը, վորովհետեւ մենք աշխատում ենք առանց ռեզերվների. ամենափոքր խոչընդուռ վորեն աեղ՝ և առաջ և դակու ուշացում:

Այժմ Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատը, Մեքենաշինության ժողկոմատի հետ միասին, ուրվագեծել և մարդատար վագոնի նոր ախու: Ներկայումս ԽՍՀՄ-ում կառուցված մարդատար վագոնները՝ 20,2 մետր յերկա-

բությամբ և գայտե թափքով, չեն բավարարում ինչպես
դիմացկունության պայմաններին, այնպես և խորհրդային
ուղեորի աճած պահանջներին։ Հաղորդակցության ճանա-
պարհների ժողկոմատը և Մեքենաշինության ժողկոմատը
մշակել են ամբողջազես մետաղյա կոնստրուկցիա ունեցող,
25 մետր յերկարությամբ նոր տիպի մարդարուր վագոնների
եսքիզային նախագծերը։ Նախադիված վագոններն ապահո-
վում են մեծ անվտանգություն, առավելագույն հարմարու-
թյուններ ուղեկորների համար և համապատասխան են սա-
հիտարական տեխնիկայի ժամանակակից պահանջներին (ա-
վելի պակաս թափանցելի յեն փոշու համար)։ Վագոններում
ներկայաւում գործադրվող բնականորեն գուրս քաշող վենտի-
լացիայի փոխարեն նախագծված ե ավելի կատարելագործված
վենտիլացիա, վարը վագոնում ապահովում ե բարձրար քա-
նակությամբ մաքուր ող, ներհոսող վենտիլացիա և ողա-
կոնդիցիոնացում, կենտրոնական ջեռուցում՝ շողեքարշից,
առանձին գեպքերում վագոններն անհատապես տաքացնելու
հարավորությամբ. ուղեկորական ու պաշտոննեական առանձ-
նատեղերի բարելավված կահավորում և հարդարում։ Մար-
դատար յերթեեեկության ասպարեզում խնդիր և ծառա-
ցած՝ արմատացնել իսկական սոցիալիստական կուլտուրան։

Վորապես որինակ ամբողջ մարդատար յերթեեկության համար, կարելի յե բերել մեր Մոսկվայի Մետրոպոլիտենը, գործ աշխատում ե որինակելիորեն-կուլտուրապես։ Պետք է խոստովանել, վոր քննակչությունն ինքն ել Մետրոյում ցույց ե տալիս դեպի փոխադրության միջոցները կուլտուրական վերաբերմունքի որինակներ։

Ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր շինաբարության
այս ծրագրով մենք, յերկաթուղայիններս, վոչ մի զեպ-
քում չենք ուղղում ասած լինել, թե մեզ մոռ ուղերջներ
չկան հետագա վերելքի համար։ Այդ ճիշտ չեւ իհարկեւ,
մենք սպառել ենք մեր ուղերջների կղալի մասը, ասկայն
մենք դեռ ունենք վորոշ ուղերջներ, ինչպես, որինակ,
դնացքները կազմելու ասպարեզում, յերթևեկության ստա-
խանովյան-կրիվոնոսյան մեթոդները տարածելու, պարա-
պուրզները կրծատելու, դնացքները մարշրուտավորելու,
ողակաձեւ յերթեեկություն կիրառելու (առանց դեպու-
չա)

ժամելու), լվացումից-լվացում ընկած ժամանակամիջոցում շոգեքարշերի վաղքն ավելացնելու, խորսովկումներն ու ավարիաները կրծատելու, ճանապարհային, շոգեքարշային, վագոնային ու այլ տնտեսությունների խնամքը բարելավելու և այլ ասպարեզներում:

Գնացքներ կադրմէլը մեծ նշանակություն ունի գնացքների յերթևեկությունն արագացնելու գործում։ Կայսրաներում գնացքների պարապուրդը մեկ ժամով կրծատելը հնարակություն է տալիս բնունումն այնելացնելու այնելի քան 5 հազար վագոնով։

Յերկաթուղային տրանսպորտը մեծ ռեզերվ ունի ըստ
դրաֆիբկի յերթևեկությունը կազմակերպելու թերություն-
ների վերացման գործում : Յերկաթուղային տրանսպորտը
հասել և խորարկումների և ավարիաների կրծատման :
Մինչեռ բնունաւար աշխատանքն ավելացել և, խորտա-
կումների թիվը 1938 թվականին՝ 1934 թվականի համեմա-
տությամբ՝ կրծատվել և ավելի քան յերկու անգամ, բայց
խորտակումների ու ավարիաների քանակը դեռևս զգալի յե-
նոցտակումների և ավարիաների հետագա կրծատումը յեր-
կաթուղիների աշխատանքի բարձրացման զգալի մի աղբյուր
և հանդիսանում :

Յերկաթուղային տրանսպորտի աշխատանքը բարձրացնելու ասպարեզում չոդագործված հնարափորություններ ունի չոգեքարշային տնտեսությունը; Վերջին յերկու տարում բարձրացել և «ՖԴ», «ՍՈ» շոգեքարշների տեսակարար կշիռը, իսկ քարշային նորմաները բարձրացվել են ընդամենը 8 տոկոսով և տեխնիկական արագությունը՝ 7 տոկոսով:

Ողակաձեւ յերթեւկության ծավալումը և ծանրաքարչ գնացքների ավելցումը, նորոգման էագմակերպումը՝ մասերի փոխարինելիության հիման վրա, շողեքարշների վրա բուստեր զնելը, ջրի տաքացումը տեսնդերում, ածխափոշու դործածումը և այլն—սրանք տրանսպորտի աշխատանքի նոր վերելքի հոգոր աղբյուրներն են:

Մեխանիզմների ճիշտ ոգտադրությունը բեռնման-քեռնաթափման աշխատանքներում, բեռնատար աշխատանքի մեջ բլիղմանի, յերթեեկության մեջ կոժուխարի և կրամնովի մեթոդների ամեն կերպ զարգացումը, գնացքները կրիվոնա-

ստրար վարելը—այս բոլորը վիթխարի ռեզերվներ են պարանակում արտնտպորտի աշխատանքի բարձրացման համար :

Յերկաթուղային տրանսպորտի ամբողջ աշխատանքի մեջ մեծ ուժ հանդիսացան բանվորական մասսաների մորիլիվացիան, բանվորական կադրերի ընտրության գործի բարելավումը, ղեկավարության կոնվենտության բարելավումը:

Կա ևս մեկ ռեզերվ, մեծ ռեզերվ, վորը մեղ մատնաշել ե ընկեր Ստալինը: Այդ ռեզերվը փոխադրումների կանոնավորումն ե, վոչ-ուացիոնալ հանդիսական ու հեռավոր փոխադրումների լիկվիդացիան: Այդ կախված ե թե՛ հենց տրանսպորտից և թե՛ կլինտուրայից:

Մինչև այժմ, չդիտես թե ինչու, սովոր են յեղել մտածելու, թե այն ամենը, ինչ փոր ներկայացնում են տրանսպորտին, արանսպորտը պարտավոր ե փոխադրել: Ինքը տրանսպորտը, իհարկե, կարող եր կանոնավորել փոխադրումների պլանավորումը, գանգատվել և պահանջել, վոր կլինտուրան շտկի գործը: Դժբախտաբար, այդ արվել ե չափազանց թույլ կերպով: Դրա հետևանքով մենք ունենք զայրացուցիչ, վոչ-ուացիոնալ փոխադրումների փաստեր, որինակ՝

Արևելյան Սիբիրի յերկաթուղուց 13 վաղոն գերան է փոխադրվել Հոկտեմբերյան յերկաթուղին, այնինչ ինքը՝ Հոկտեմբերյան յերկաթուղին նույնպիսի անտառանյութ է փոխադրել Արևելյան ուղղությամբ:

Հարավային յերկաթուղին միքանի վաղոն անտառանյութ և ուղարկել Գորկու յերկաթուղուն, մինչդեռ ինքը՝ Գորկու յերկաթուղին Հարավին անտառանյութ մատակարարող բաղադրական հանդիսանում:

Կույբիչկ կայարանից 20 վաղոն փայտ և ուղարկվել Արսկ, իսկ հանդիսակաց ուղղությամբ Տավումանովո կայարանից Բաշնեֆտը 20 վաղոն փայտ ուղարկել և Կույբիչկ կայարանը:

Բանն այնտեղ է հանում, վոր յերկաթուղիների բեռնատար սպասարկություններն առանց ամենափոքր առարկության ընդունում են այնպիսի արտառոց փոխադրումներ, ինչպես թթու դրան կաղամբ՝ Ողեսսայի յերկաթուղուց

ղեղիք Արևելք, լոռամբրդին և սովորական փոյտեղին կառույցը Հոկտեմբերյան յերկաթուղուց նույնական գեղիքի արեւիլք՝ հազարավոր կիլոմետրերով, խոտը՝ վ. Կույբիչկի անվան յերկաթուղուց գեղիքի Արևելք, մանրացրած կաղիճը՝ Ֆ. Ե. Զերժինսկու անվան յերկաթուղուց գեղիքի Արևելք, ծղութ՝ Լենինյան և Գորկու յերկաթուղիներից Ողեսսայի յերկաթուղին, շաքարը՝ Որջոնիկիձեյի յերկաթուղուց Զարալ-Արևելյան յերկաթուղին:

Կարելի՞ յերել բացահայտորեն վոչ-ուացիոնալ փոխադրումների դեռ հսկայական քանակությամբ այդպիսի որինակներ:

Մենք պետք ե վերջ տանք դրան:

Ճիշտ պլանավորելով, ճիշտ իրավանացնելով պլանը, մենք պետք ե գարգացնենք յերկորի արտադրողական ուժերը, ճիշտ տեղադրենք դրանք և դրանով իսկ կրծատենք փոխադրումների քանակին ու բարելավենք նրանց փորակը:

Յերկաթուղային տրանսպորտը կարող է և պետք ի ողնի կենտրոնին ու Կառավարությանը՝ խեղաթյուրումներ թույլ չտալու յերկորի արտադրողական ուժերի տեղադրման գործում:

Արդյունաբերության ճիշտ տեղադրման խնդիրն ամենայն սրությամբ զբվեց ընկեր Ստալինի կողմից: Համեկ(բ)ի XVI համագումարում ընկեր Ստալինը ԽՍՀՄ-ում արտադրողական ուժերի և ամենից առաջ արդյունաբերության ճիշտ տեղադրման պրոբլեմն առաջադրեց փորպես սոցիալիստական շինարարության կարևորագույն ինդիրներից մեկը:

Պետք ե ասել, վոր քիչ բան չի արված ընկեր Ստալինի այդ ցուցումներն իրականացնելու համար:

Ածիփի խոչոր հանույթի մեկ շրջանի՝ Դոնբասի փոխարեւն, Ստալինյան հնդամյակների հետևանքով, մենք ունենք նոր շրջաններ՝ Կույբիչկ, Աւրալուտոլը, Կարաչանդան, Մոսրազը, Դալուտոլը, Սրեղազուգոլը:

Հին շրջաններում ածիփի հանույթի վիթխարի աճմանը զուգընթաց, հանույթի աճը նոր շրջաններում ընթանում եր սականաշաբաթ մեծ տեմպով և այդ շրջանների ակտակարար

կշխաք յերկրորդ հնդամյակի վերջերին ԽՍՀՄ-ում գրավուրեն ալիքացավ:

Սև մետալուրգիայի շրջանների տեսակարար կշխաք նույնարդես այլ տեսք ընդունեց՝ համեմատած հին կապիտալիստական Ռուսաստանում մետալուրգիայի հրեշտակոր տեղադրման հետ:

Հարավի գործարանների տեսակարար կշխաք պրոկատի արտադրության մեջ 1932 թվի 64,1 տոկոսից 1937 թվին իջակ մինչև 56,0 տոկոսի, այն ժամանակ, յերբ Արևելքի տեսակարար կշխաք համապատասխանորեն աճեց 16,8 տոկոսից մինչև 23,3 տոկոսի: Վերջին տասնամյակի ընթացքում վիթխարի չափով աճեց աղբային հանրապետությունների մերդյունաբերությունը:

Սակայն, պետք է ասել, վոր արտադրողական ուժերի ճիշտ տեղադրման խնդիրը դեռևս մնում է իր ամբողջ սրությամբ, վորովհետեւ մի տերող շարք ճյուղերի ու բնագավառների զարգացման ասպարեզում մենք հետ ենք մնացել: Այդ սրությունը դրում է առանձնապես յերկաթուղարին տրանսպորտը:

Բավական է ասել, վոր այժմ Դոնբասի ածուխը հասնում է մինչև Արխանգելսկ, մինչև Ռոֆա, Հարավային մետաղը հասնում է մինչև Վլատիվոստոկ, Սիբիրինը՝ մինչև Վլադիվոստոկ, Աշխարադ, Լենինգրադ ու Կիև, ուկրանական շաքարը փոխադրվում է 8—9 հազար կիլոմետր և հասնում է մինչև Հեռավոր Արևելք, Իվանովոյի ու Մոսկվայի տեքստիլը փոխադրվում և հաղարաքոր կիլոմետրերով և այլն: Մեքենաները հալաքածած վիճակում փոխադրվում են 7—8 հազար կիլոմետր: Յեմենտը Հարավից, Նորվորսիյակից ու Ամվրոսիկայից փոխադրվում է մինչև Հեռավոր Արևելք՝ 8,5—9 հազար կիլոմետր: Տրանսպորտի շահերի անտեսումն առանձնապես ցայտուն կերպով է յերկում մետալուրգիայի մեջ՝ պրոկատային դադդյանների մասսարարական մասնադիտացման որինակով:

Պարզ է, վոր մեղանում թույլ են սպասպործված սոցիալիստական տնտեսության պլանային հնարավորությունները: Յեթե բուրժուական տնտեսության մեջ արդյունաբերական կենտրոններն առաջանաւ տարեկան կազմով:

մեղ մոտ գրանք առաջ են գալիս պլանային կարգով և մենք կարող ենք պլանային կարգով ուղղություն տալ մեր շինարարությանը, հետեւալեն, մենք կարող ենք և պետք է լուրջ ըրջագարձ կատարենք այդ տեսակետից: Այդ մասին մեղ մատնանշել ե ընկեր Ստալինը: Մեր յերկրի յերկրաբանական հարստությունները մեղ թույլ են տալիս արտադրությունը լավագույն ձևով մոտեցնել հումքի և սպառման կետերին: Այդ տեսակետից մեղ մեծ ողնություն են ցույց տալիս անձնվիրաբար աշխատող մեր բազմաթիվ յերկրաբանները:

Ածուխը մեղանում տարածված է, բառիս բուն իմաստով, ամբողջ յերկրում՝ Մոսկվայի մարզից սկսած մինչև Վլադիվոստոկ: Յերկաթահանք կա կենտրոնում, Հարավում, Ռուբակում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Հյուսիս-Ռեմսությունում, բայց շահագործվում է վոչ ամենուրենք:

Վերջապես, յեթե նույնիսկ չուզուն չիա, տպա ավելի ձեռնուու յե կառուցել փոքրիկ գործարաններ՝ ողբակատային դադդյաններով, և փոխադրել չուզունը, քան թե փոխադրել պրոկատային մետաղ:

Անհրաժեշտ է զարգացնել նավթի և գազի հանույթը բոլոր տեղերում՝ վորտեղի կա նավթ ու գազ: Մասնավորապես, այսուղեղ անհրաժեշտ է ասել, վոր նավթ և գազ փոխադրելու նպատակով անհրաժեշտ է գազի համար կառուցել գազուղիներ, իսկ նավթի համար՝ նավթուղիներ: Դաշտատ ավելի ձեռնուու յե, քան թե յերկաթուղիններով փոխադրելլ:

Տեքստիլն անհրաժեշտ է զարգացնել նաև բամբակի արտադրության վայրերում, թակ բամբակը զարգացնել մեր յերկրի հարավային ըրջաններում, որինակ՝ Ռուկրանիայում, Կովկասում, Հյուսիսային կովկանում: Շաքարը՝ այն վայրերում, վորտեղ ճակնդեղ և մշակնում, մատնավորապես անհրաժեշտ է ընդարձակել շաքարի ճակնդեղի ցանքերի տարածությունը և կառուցել շաքարի նոր գործարաններ՝ Հեռավոր Արևելքում, Թուրքամիրում ու Տոմսկի յերկաթուղում: Յեմենտը՝ դարգացնել Հեռավոր Արևելքում, Ռուբակում, Սիբիրում: Հումքի յերկրաբանական պաշտիներն արտադրության համար մեծ են:

Վերջապես, պետք է ամեն կերպ գարդացնել տեղերում տեղական արդյունաբերությունը, մասնավորապես կահույքի ֆաբրիկաները, կոչկեղենի, հրուշակեղենի, կարի ֆաբրիկաները և այլն:

Ել յետ չեմ խոսում բանջարեղենի և նման մթերքների մասին: Այդ հասարակ խնդիր չե: Բայցի նոր վայրերում նոր շինարարություն կատարելուց, անհրաժեշտ և տեղափոխել չին ձեռնարկությունները: Այդ գործը պահանջում է լուրջ մշակում:

Եթե լրջորեն ձեռնամուխ լինենք, ապա այդ ոլրոբեմը քայլ առ քայլ կարելի յե լուծել:

Հազորդակցության ճանապարհների ժողկոմատը և յերկաթուղիները պետք մեծ դեր խաղան այսուղ և բոլշեկուրն ձեռնամուխ լինեն այդ գործին:

Երկաթուղայինների առջև, անտարակույս, ծառացած ևն մեծ խնդիրներ՝ ամրապնդել ձեռք բերված հաղթանակները և տրանսպորտում արմատացնել նոր սոցիալիստական կուլտուրան, կանոնավորել աշխատանքը, վորակեսդի հաջողությամբ սպասարկեն աճող ժողովրդական տնտեսությանը, ճշտապահությամբ կատարեն իրենց պարտականությունները կլիննառուրայի վերաբերմամբ՝ բեռների փոխադրության ասպարեզում, և, մանավանդ, արմատացնեն սոցիալիստական հայրենիքի ուղևորի կուլտուրական սպասարկումը:

ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

XVII և XVIII համակումարների միջև ընկած ժամանակաշրջանում աճել ե յերկաթուղայինների նյութական բարեկցությունը:

Երկաթուղայինների աշխատավարձի ընդհանուր ֆուլը 1933 թվի 3,1 միլիարդ ռուբլուց աճեց մինչև 9,1 միլիարդ ռուբլը 1938 թվին, այսինքն՝ յերեք անգամ: Աշխատավարձը 1933 թվին կազմում եր միջին հաշվով 131 ռուբլի, իսկ 1938 թվին՝ 287,9 ռուբլի: Բեռնատար յերթեկու-

թյան մեքենավարը 1933 թվի 328 ռուբլու փոխարեն վաստակում է միջին հաշվով 846 ռուբլի՝ 157 տոկոսով ավելի: Մարդատար յերթեկության մեքենավարը 1933 թվի 398 ռուբլու փոխարեն վաստակում է միջին հաշվով 1.042 ռուբլի:

1934 թվից մինչև 1938 թիվը յերկաթուղայինների համար կառուցվել ե 2,4 միլիոն քառակուսի մետր բնակելի ապրածություն: Թեև պետք ե ասել, վոր բնակարանային գժվարությունները յերկաթուղային տրանսպորտում դեռ մեծ են և անհրաժեշտ ե զարդացնել բնակարանային շնարբությունը:

Մեայն վերջին յերեք տարվա ընթացքում յերկաթուղային տրանսպորտում կառուցվել ե 318 նոր դպրոց, իսկ ընդամենը կա 2.595 դպրոց, վորտեղ սովորում են յերկաթուղայինների 1 միլիոն 130 հազար յերեխաններ:

1934 թվից մինչև 1938 թիվը յերկաթուղային տրանսպորտում կառուցվել ե շահագործման և հանձնվել 62 գրավանոց, 130 պոլիկլինիկա ու ամբուլատորիա, 620 ծննդաբանում, 143 մանկական և կանանց կոնսուլտացիա, 310 մանկամատրիք, 71 մանկական սանատորիա:

Երկաթուղային տրանսպորտում կան 6 հաղարից ավելի կարմիր անկյուն, 700 ստացիոնար ակումբ և 134 վագոնակումբ: Այդ կուլտուրական ոջախներում կան 8 հաղարից ավելի գեղարվեստական ինքնազործ խմբակներ, վորոնց մասնակցում են ավելի քան 200 հազար յերկաթուղայիններ ու նրանց ընտանիքների անդամները:

Նյութական բարեկցության աճման հետ միաժամանակ աճել ե քաղաքական ակտիվությունը:

Ստախանովյան-կրիվոնոսյան շարժումը յերկաթուղային տրանսպորտում բնորոշվում ե աշխատանքի մի ամերող շարք նոր, առաջավոր մեթոդների առաջացումով, վորոնք վիթխարի ուղղերիվներ են յերեան բերել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար:

Կուսակազմակերպությունները դլվագորեցին սոցիալաստական մրցությունը: Ստախանովյան շարժումը յերկաթուղային տրանսպորտում գարձել ե իսկական մասսայական շարժում և ստախանովականների բանակը կուսակցության

ХVIII Համագումարի ժամանակ ունի 566.719 մարդ: ԽՍՀՄ Փողկոմիսորհի, Համկ(բ)կ Կենտկոմի և ՀԱՄԿԽ-ի 1938 թվի դեկտեմբերի 28-ի վորոշումը կատարելու համար մղվող պայքարը տվեց իր արդյունքները, և աշխատանքային կարգապահությունը տրանսպորտում ամսե-ամիս ամրապնդում է: Յերկաթուղիների մեծ մասում կարգապահության խախտումների ամենից ավելի մեծ կրծատում և նկատվում չողեքարշայինների մոտ—այդ վճռական պրոֆեսիայում:

Կուսակցության և կառավարության վորոշումից բղիող մասսայական-քաղաքական հարցերն այժմ հավասարապես լրջորեն ծառացած են ժողովրդական տնտեսության և արդյունաբերության բոլոր ճյուղերում: Տրանսպորտի քաղբաժնները յերկաթուղայինների և նրանց ընտանիքների մեջ կազմակերպեցին աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու մասին ԽՍՀՄ Փողկոմիսորհի, Համկ(բ)կ Կենտկոմի և ՀԱՄԿԽ-ի վորոշման պարզաբանումը: Ռդտագործվեցին մասսայական-աղիտացիոն աշխատանքի բոլոր ձեւերը՝ ընթերցանություններ, զբույցներ, բանկորական ժողովներ, քաղորիք, ռազիոն, մամուլ, ցուցադրական աղիտացիա, այցելություններ յերկաթուղայինների բնակարանները:

Տրանսպորտի վերելքի համար մղվող պայքարին ակտիվ կերպով մասնակցում են նաև յերկաթուղայինների կանայք: Յերկաթուղիների ցանցում կին-ակտիվիտաների շարժմանը մասնակցում են ավելի քան 250 հազար կանայք: Տրանսպորտի կանանց մեջ նոր, հիանալի շարժում և հանդիսանում՝ շարժումը հանուն մեքենավարի աշխատանքի տեխնիկայի տիրապետման կանանց կողմից:

Վորպեսդի կանայք տիրապետեն մասսայական պրոֆեսիաների տեխնիկային, ներկայում տրանսպորտում ծավալված և դասընթացների ցանց, վորոտեղ սովորում են մոտավորակես 16 հազար կանայք, այդ թվում՝ չողեքարշային դործն ուսումնասիրում են ավելի քան 5 հազար կանայք, վորոնք պատրաստվում են մոտ ժամանակներս դառնալու մեքենավարների ողնականներ, իսկ հետապայում նաև մեքենավարներ: Աշխարհում առաջին անդամ խորհրդային

յերկաթուղային տրանսպորտում արդեն վարպետ մեքենավար աշխատում է 18 կին, վորպետ մեքենավարի ողնական՝ 319 կին, վորոնք դերազանցորեն են կատարում իրենց պարտականությունները:

Յերկաթուղային տրանսպորտում առ 1-ի հունվարի 1939 թվի մենք ունեյինք 165.511 կոմունիստ—115.346 Համկ(բ)կ անդամ, 50.165 թեկնածու:

Առ 1-ի հունվարի 1934 թվի տրանսպորտում կար 115.453 կոմյերիտական, իսկ առ 1-ի հունվարի 1939 թվի՝ 337.889 հոգի, այսինքն՝ աճում ավելի քան յերկու անգամ: Լենինյան-ստալինյան կոմյերիտամիությունը տրանսպորտում աճել է, դառնալով վիթխարի մի բանակ: Համկ(բ)կ Կենտկոմի առաջադրանքը՝ յերկաթուղային տրանսպորտում 20 հազար կոմյերիտական ընդունելու մասին—կատարված է: Վերջին յերկու տարվա ընթացքում կոմյերիտականներից Համկ(բ)կ թեկնածու յէ ընդունվել ավելի քան 22 հազար հոգի և ավելի քան 1,5 հազար հոգի փոխարիւել և թեկնածությունից Համկ(բ)կ անդամ:

Վերջին տարիների ընթացքում բնորոշ է կոմունիստների թվի ավելանալն ի հաշվի բարձրագույն ու միջնակարգ կրթություն ունեցող անձերի:

Այսպես, յեթե առ 1-ի հունվարի 1936 թվի տրանսպորտում յեղել և բարձրագույն կրթությամբ 8.990 կոմունիստ, աղքա առ 1-ի հունվարի 1939 թվի արդեն կար 13.064 հոգի:

Համկ(բ)կ Կենտկոմի փետրվար-մարտյան պլենումի վորոշմամբ կազմակերպվեց 478 հանգուցային կուսկոմիտե: Դրանք միավորեցին յերկաթուղային տրանսպորտի բոլոր սկզբնական կազմակերպությունների 60 սովորից ավելին:

Տրանսպորտի քաղբաժինները և հանգուցային կուսկոմիտեներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել են կուսական-քաղաքական աշխատանքի և կաղրերի քաղաքական ստուգման վրա՝ ստալինյան հիանալի յերկի՝ Համկ(բ)կ պատմության ուսումնասիրման աշխատանքի վրա: Յերկաթուղիների բոլոր քաղբաժիններում ստեղծված են լեկտուրական խմբեր, վորոնք սիստեմատիկաբար մեկնում են հանդույցներն ու կայարանները՝ Համկ(բ)կ-ի պատմությունից դասախոսություններ կարդալու, «Համկ(բ)կ պատ-

մության համառոտ դասընթացն» ինքնուրույն կերպով ու-
սումնափրող յերկաթուղայիններին ովնելու նպատակով,
Համեկ(թ)կ պատմության վերաբերյալ դասախոսություններ
կարգալու համար։ Միայն 1939 թվի հունվարի և փետր-
վարի ընթացքում կարդացվել ե մոտավորապես 7 հաղար
դասախոսություն, վորոնց ներկա յեն յեղել ալելի քան մեկ
ժիկոն յերկաթուղային։

Ընկեր Ստալինի տվյած լոգունգը՝ բոլեկիզմին տիրապե-
տելու մասին, քաղաքական ու անտեսական աշխատանքի
զուղակցումը, պետք է այսուհետև ել հանդիսանա յերկա-
թուղային կուսկազմակերպությունների գործողության ծրա-
գիրը։

Սակայն, թեև կուսկազմակերպությունները բարելավել
են իրենց աշխատանքը և կովկել են ձմեռային դժվարու-
թյունների դեմ մդմող պայքարում, նրանց աշխատանքի
մեջ, ինչպես նաև ղեկավար տնտեսական ու քաղաքածնային
աշխատողների աշխատանքի մեջ, կան խոչըր թերություն-
ներ, ինչպես մասսայական աշխատանքի կազմակերպման,
կոմունիստների դաղափարական դաստիարակության դր-
վածքում, այնպես և կազմակերպական աշխատանքի դր-
վածքում։ Աւտոի, ինքնաքննադատությունը և դդաստու-
թյունը պետք է դրվեն տրանսպորտում քաղաքական աշխա-
տանքի հետագա բարելավման հիմքում։ Իրենց աշխատան-
քում հնալիլով տեղական կուսակցական կազմակերպու-
թյունների ողնության վրա, տրանսպորտի կուսկազմակեր-
պությունները լիւլիղացիայի յենթարկեցին «ռոտարցման
շերտը», վոր կար տեղական ու յերկաթուղային կազմակեր-
պությունների միջե։

Յեթե Համեկ(թ)կ ԽVII համագումարի ժամանակ կոմու-
նիստների մեջ շատ կային նորմաները չկատարողներ ու խո-
տանարարներ, առա ներկայիս ետապը բնորոշվում է ար-
տադրության մեջ կոմունիստների ավանդարդային դերի
զգացմի բարձրացումով։

Յերկաթուղու կոմունիստները մարտականորեն լծվել
են յերկաթուղային տրանսպորտի բարձրացման համար մըզ-
վող պայքարին։ Յերկաթուղային տրանսպորտում ծավալ-
ված ստախանովյան-կրիվոնոսյան շարժման մեջ առաջատար

գեր ե պատկանում կոմունիստներին։ Սոցիալիստական աշ-
խատանքի հարյուրավոր նովատորների մեջ, վորոնց անուն-
ները հայտնի յեն ամբողջ յերկրին, ճնշող մեծամասնու-
թյունը կոմունիստներ և կոմյերիտականներ են։

Յերկաթուղային տրանսպորտի կուտկազմակերպու-
թյունները մեծ աշխատանք են կատարել տրանսպորտի նոր
տեխնիկային տիրապետելու, աշխատանքի ստախանովյան-
կրիվոնոսյան մեթոդներն արժատացնելու, տեխնիկական
շահագործման կանոններն ուսումնասիրելու, հետ մնացող-
ներին ոգնություն ցույց տալու ուղղությամբ։ Սոցիալիս-
տական մրցության մեջ ծնունդ առան նոր ձեեր, վորոնք
մեծ գեր խաղացին յերկաթուղային տրանսպորտի վերելքի
գործում (ծանրաքարչ գնացքներ վարելը, ողակաձե յերթե-
վեկությունը, վաղոնների նորոգումն առանց անջատման,
մրցությունը մեկ ուղեռության ընթացքում, յերաշխավո-
րական պասպորտներ տալը, կայարանային ու ղեպոյի մար-
կաները, ձմռանը պատրաստ լինելու պատմորտներ տալը)։
Այդ ձեերի նախաձեռնողներն առավելացրես կոմունիստներն
ու կոմյերիտականներն են յեղել։ Յերկաթուղային կոմու-
նիստները Համեկ(թ)կ XVIII համագումարն են յեկել վորոնք
մեր կուսակցության համախմբված, միաձույլ մի ջոկատ։

Դոնեցի յերկաթուղու յերկաթուղայինների նախաձեռ-
նությունը՝ նախահամագումարյան մրցության գործում՝
արձագանք զտավ Խորհրդային Միության բոլոր յերկա-
թուղայինների մեջ։ Նախահամագումարյան մրցության ար-
դյունքը հանդիսացավ բեռնման և բեռնաթափման պետա-
կան պլանի գերակատարումը փետրվար ամսին, կարծատե-
դժվարություններից հետո։

Յերկաթասաւային կոմիտեները, մարդկաներն այժմ լուրջ
ուշադրություն են նիլիրում յերկաթուղային աշխատանքին
և ողնում են յերկաթուղայիններին։ Միևնույն ժամանակ
քառորդինները հենցում են պլրոֆմիությունների ողնության
վրա։ Պետք ե տակել, վոր յերկաթուղայինը աշխատողների
պլրոֆմիությունները մեծ ողնություն են ցույց տալիս իրենց
մասսայական-քաղաքական աշխատանքով։ Պետք է ընդ-
զձեմ, վոր յերկաթուղային տրանսպորտում հրամկադրը,
միաձանականության մեջ առաջատար

կյանքին, կուսակցական աշխատանքին: Կուսակցական քաղաքական պատվի զդացմունքը յերկաթուղային տնտեսակարների մեջ այժմ, անտարակույս, զարդացած է: Շատ յերկար ժամանակ յերկաթուղայինները վաս աշխատանքի հետեանքով գտնվում ենին անդատիսլ վիճակում, և յերբ նրանք արդեն պատիվ են նվաճել ու յերբ յերկաթուղայինների պատիվը գարձել և յուրաքանչյուր յերկաթուղայինի գործը՝ մինչև ոլաքավարը ներառյալ, հասկանալի յէ, վոր տնտեսավարն արդեն չի ուղղում կորցնել այդ պատիվը: Այդ պատիվը նրանք վոչ վոքթ չեն առ, նրանք այդ նվաճել են իրենց աշխատանքով: (Մափահարություններ):

Ես կարող եմ ասել, վոր յերբ տեղի յէ ունենում այս կամ այն դժվարությունը, մանավանդ ձմեռային պայմաններում, ապա այդ դժվարությունն ապրում են բոլորը, սկսած ոլաքավարից, մեքենավարից, կոնդուկտորից մինչև քրամանատարները, նրանց կանայք ու յերեխաները: Կան դեռևս այնպիսի տարրեր, վորոնք գործին վերաբերվում են անփութ, վոչ սիրով, դեռևս կան մարդիկ, վորոնք չդիտեն աշխատել, չեն սովորել և պարծենկոտությամբ արդեն պատրաստված են ձևացնում իրենց: Բայց յերկաթուղայինների հիմնական մասսան, վորոնց քաղաքականապես մեծ բարձրության և հասցրել կուսակցությունը, նրա կենտրոնական կոմիտեն, բոլշևիկորեն են պայքարում նաև Խորհրդային յերկաթուղային տրանսպորտի պատվի համար, նըանում աշխատելու ոլատվի համար, վորի մասին ասաց ընկեր Ստամբուլը:

Փոխիւլ ե յերկաթուղայինի կուլտուրական-քաղաքական կերպարանքը: Մոայլ, անսիրամիր մարդուց յերկաթուղայինը զարձել է կենսուրախ, կայտառ և վատահ իր վաղվա նկատմամբ: Նա խոկական մարտիկ ե—սոցխալիցի վա որվա նկատմամբ: Այդ տեսակետից մեծ դեր ե խաղում յերկաթուղային Համամիութենական որը, վոր սահմանվել է ի հավերժացումն ընկեր Ստալինի կողմից յերկաթուղայինների ընդունելությանը: Այդ որը դարձել է յերկաթուղայինների խոկական տոնը և կենցաղում, և աշխատանքի մեջ:

Մեզ մոտ, յերկաթուղային տրանսպորտում, ամել են նոր մարդիկ: Յեզ զարմանալի չե, վոր մենք ունենք հարյուր-հազարավոր, ուղղակի կարող եմ ասել, առաջավոր մարդիկ և' կանանց մեջ, և' տղամարդկանց մեջ, մեքենավարների ու այլ պրոֆեսիաների մեջ:

Մեր մեքենավարներն առանձնապես պարծենում են ամենից առաջ այն բանով, և նրանք ամբողջ ժամանակ հայտարարում են այդ, վոր նրանք ընկեր Ստալինի հետ միասին ունեն միենալույն պրոֆեսիան: Նըանք—յերկաթուղիների լոկոմոտիվի մեքենավարներն են, իսկ ընկեր Ստալինը՝ հեղափոխության լոկոմոտիվի մեքենավարը: (Յերկարածուծափահարություններ): Նրանք հայտարարում են՝ մենք պետք ե աշխատենք և պայքարենք այնպես, ինչպես սովորեցնում, ինչպես աշխատում և պայքարում ե ընկեր Ստամբուլը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՅԵՎ ԿԱԴՐԵԲԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսակցության XVII համազումարում ընկեր Ստալինը խոսեց Լենինի այն հանճարեղ մտքի մասին, վոր՝ «Դիմավորը կազմակերպական աշխատանքի մեջ—մարդկանց ընտրությունն ու կատարման սուրգումն ե»: Ընկեր Ստալինը սովորեցնում է, վոր ճիշտ զեկավարել՝ նշանակում ե «առաջին՝ դառնել հարցի ճիշտ լուծումը, իսկ ճիշտ լուծում գտնելն անհնարին ե առանց մասսաների փորձի հաշվարման, մասսաների, վորոնք իրենց սեփական մեջքի վրա յեն փորձում մեր զեկավարության արդյունքները».

յերկրորդ՝ կազմակերպել ճիշտ վորոշման կենսադործումը, վորը, սակայն, չի կարելի կատարել առանց մասսաների կողմից ուղղակի ողնություն ստանալու:

յերրորդ՝ կազմակերպել այդ վորոշման կատարման ստուգումը, վոր գարճալ հարավոր չե կատարել առանց մասսաների ուղղակի ողնության»: (Համկ(ր)կ կենտկոմի Պլենումում 1937 թ. մարտին արտասահման յեղափակման խոսքից):

Այս կամ այն հարցի լուծումը հենց հարկավոր և ընդունել մասսաների հետ խորհրդակցելով, մասսաների վրա

Հենվելով։ Մի ամբողջ շարք վորոշումներ, վոր ընդունել ե կուսակցության կենտկոմը հաշվետու ժամանակուշրջանում, քաղաքական ու կազմակերպական բնույթ կրող վորոշումներ՝ Սահմանադրության մասին, դյուզատնտեսական արտելի կանոնադրության մասին, ընտրությունների մասին, կուսակցական աշխատանքի բարելավման մասին—այս բոլոր հարցերը լուծվում ենին հենց այնպես՝ տեղերից մարդիկ կանչվում ենին կենտկոմ, նրանց հետ քննարկում ենին հարցերը, խորհրդակցում ենին և դրանից հետո արգեն ընդունում վորոշումը։ Նշանակում ե, մասսաների փորձը հաշվի առնելը, ողնությունը մասսաների կողմից—բոլշևիկյան վոճի առաջին դիմն ե, վորը պետք ե ողահպանի արնավարդեկավարը։

Յերկրորդ դիմը—այդ՝ կատարման, թսկական բոլշևիկյան ստուգման կազմակերպումն ե։ Պետք ե ասել, վոր կատարման ստուգման գործում մեզ մոտ շատ ճեղքվածքներ կան։ Ճիշտ ե, հրամաններ շատ են հրատարակվում։ Զե՞նոր հրաման հրատարակելն ավելի ճիշտ ե, քան նրա քըրտնաշան ստուգումը։ Յես կարծում եմ, կատարման ստուգման պլյուսներից մեկը կլիներ այն, վոր մեզ մոտ ավելի քիչ հրամաններ լինելին և ավելի շատ լիներ հաշվառում ու մարդկանց ստուգում։

Կատարման ստուգումը և բոլշևիկյան հեղափոխական դպաստության իրականացումն անբաժանելի յեն միշյանցից։ Կատարման ստուգումը հնարավորություն ե տալիս իմանալու, թե մարդն ինչպես ե աշխատում։ Զգաստություն—այդ նշանակում ե դիտել, թե ի՞նչպես ե աշխատում մարդը՝ սրտա՞նց, թե՞ անփույթ, յեռանդո՞վ, թե՞ թմրած, նա սիրառ ներդրո՞ւմ ե արդյոք իր գործի մեջ, թե վոչ, ցալո՞ւմ ե արդյոք գործի համար, թե՞ զուցե ձևականորեն գլուխ ե աղատում հարցերից։ Մենք հաճախ տեսնում ենք այնպիսի մարդիկ, -վորոնք ձեւականորեն են մոտենում գործին, թղթեր են դրում, վորպեսզի վերապահովադրեն իրենց, վորպեսզի, համենայն դեպս, ունենան թղթի կտոր, բայց չեն ցալում գործի համար, սրտին մոտիկ չեն ընդունում այն բոլոր դժվարությունները, վոր աղբում են նրանք։

Այսպիսով, կատարման ստուգման միջոցով կարելի յետեսնել մարդկանց։

Յեթե խոսենք զգաստության մասին, ապա զգաստությունը, ինչպես ասել ե ընկեր Ստալինը և ինչպես յերեկ ասաց ընկեր Միկոյանը, հնարավոր ե հենց կատարման ստուգում կազմակերպելու միջոցով։

Այնուհետև, բոլշևիկյան վոճը տնտեսական զեկավարի աշխատանքում տնտեսական հարցերը զուրացել կարողանալն ե կուսակցության ընդհանուր քաղաքականության հետ, կոնկրետ, պրակտիկ այն գործերի հետ, վորոնք ապահովում են կուսակցության գծի կիրառումը պրակտիկայում։

Այստեղ մեղ նորից որինակ ե տալիս մեր կուսակցության կենտկոմը և մեր Մեծ Ստալինը։ Յեթե մեր տնտեսավարներն ուսումնասիրելին մեր կուսակցության կենտկոմի ամբողջ աշխատանքը, ապա նրանք չափ բան կսովորելին բոլոր հարցերի լուծման մեջ։

Ամեն մի հարց, վորը լուծվում ե կենտկոմում, չվ սահմանափակվում ընդհանուր ցուցումներով։ Յե՛վ տնտեսական, և՛ միջազգային հարցերում, և՛ մեր յերկրի պաշտպանության հարցերում կենտկոմն ու ընկեր Ստալինն ընդհանուր-քաղաքական պարզ գրույթների կողքին տալիս են ամենակոնկրետ ցուցումներ և այդ զուգակցում ե կատարման ստուգման հետ։ Ինձ թվում ե, վոր մեր աշխատողներից շատերը չեն պատկերացնում, որինակ, թե վորքան կոնկրետ կերպով ե թափանցում ընկեր Ստալինը պաշտպանության ամբաղնդման, մեր արդյունաբերության, մանավանդ պաշտպանական արդյունաբերության մոբիլիզացիայի գործի մեջ՝ սպառազինման ժամանակակից բոլոր տեսակներն արտադրելու համար, մեր կարմիր բանակի կողմից սպառազինման այդ տեսակներին տիրապետելու համար, սկսած հրետանուց, տանկից, ինքնաթիռից։

Մարդկոմների ու Յերկրկոմների շատ քարտուզարներ այն մարդերում ու յերկրամասերում, վորոնք ունեն ուսուցական արդյունաբերություն, դիտեն և ամեն որ զգում են ընկեր Ստալինի ցուցումները պաշտպանության հարցերի վերաբերյալ, ճիշտ այնպես, ինչպես զինվորական ընկերնե-

բը, վորոնք իրացնում են ընկեր Ստալինի ամենաբյա ցուցումները:

Մենք բոլորս, տնտեսավարներս, յեթե ուզում ենք հետազոտմ հաջողության հասնել, պետք է վերակառուցենք մեր աշխատանքը։ Կեկալարությունը վերակառուցելու բնագավառում շատ բան է արված։ մենք բաժանեցինք ժողկոմատները, ժողկոմատներում ստեղծեցինք կուեղիաներ, ստեղծեցինք մի շարք նոր դվասավոր վարչություններ, նոր տրեստներ—այդ մեծ, հիանալի ոեֆորմ է։ Այդ բոլորի ամրագնդեց մեր պետությունը, ամրապնդեց մեր հզորությունը։

Կուսաթեցության ամրողջ աշխատանքը կապակցվում էր վնասաբարներին ջախջախելու և նոր միլիոնավոր մարդեկառաջ քաշելու հետ:

1937—38թ. թ. Ժամանակաշրջանում կատարվեց ծանր
և մանավանդ վառելիքի արդյունաբերության ու յերկաթու-
զային արանապորտի դեկալար կաղըերի վիթխարի թարմա-
ցում, ջախջախված վնասարարների փոխարեն նոր մարդ-
կանց առաջքաշում։ Առաջ են քաշված հաղարավոր նոր
մարդիկ։

Նոր առաջքաշված զեկավարները մեծ մասամբ ինժեներներ, տեխնիկներ են։ Որինակ, ածխային տրեստների զեկավար աշխատողների մեջ կա բարձրագույն կրթությամբ (ինժեներներ) 114 հոգի կամ 63 տոկոս։

Բայց այդ յերիտասարդ՝ կաղըրերը պետք է տիրապետեն կազմակերպչական արվեստին, մանավանդ՝ նոր նորմաների կատարման ինդրի կատակեցությամբ (աշխատանքային տեղի նախապատրաստում և այլն) և պետք է լիկիդիացիան յենթարկեն միակողմանիությունը—նեղ ինժեներական մուեցամը՝ ինժեներների մոտ և նեղ կազմակերպչական մուեցումը՝ կաղմակերպիչների մոտ:

Նըանք պետք է կազմակերպչական, վարչական աշխատանքը բոլցեկորեն զուղակցեն մասսայական-բացատրական աշխատանքի հետ (մասնավորապես դործալքումները կանխելու ուղղությամբ): Նոր կադրերի առջև ծառացած են ուսուցման, բոլցեկզմին տիրապետելու, կառավարման հըմտությանը տիրապետելու խնդիրը:

Ծանր արդյունաբերության մեջ և յերկաթուղային տրամադրությամ, ինչպիս և՝ ամենուրեք, ստեղծված և նոր, արտադրական-տեխնիկական ինստելիգենցիա: Նախկին Ծանր արդյունաբերության ժողովածափի կողմէց միավորվող ծանր արդյունաբերության մեջ յեղած 70 հազարից ավելի մասնագետների մեջ հիմնական մասսան բարձրագույն կրթություն ունի. դրանք մինչև 40 տարեկան հասակի մարդիկ են (51,8 հազար մարդ—76,1 տոկոս): Ծանր արդյունաբերության արտադրական-տեխնիկական ինստելիգենցիայի հիմնական մասսան բուհերն ավարտել և առաջին հնդամյակի և յերկրորդ հնդամյակի տարիներին: 1929 թվից մինչև 1938 թիվն ավարտածները կազմում են 80,3 տոկոս (54,720) իսկ վառելիքի արդյունաբերության ժողովածափում—85,9 տոկոս (10,447): Ծանր արդյունաբերության արտադրական-տեխնիկական ինստելիգենցիայի կադրերն արտացոլում են կոռուպցության գիծը՝ ստեղծել և դաստիարակել ազգային կառլեր:

Կին-մասնագետները ծանը արդյունաբերության մեջ կազմում են 13 հազար հզդի՝ 19,1 տոկոս, ընդվորում ին-ժեներները՝ 8,6 հազար հզդի կամ 15,4 տոկոս։ Կին-ինժե-ներ-քիմիկոսները՝ 36,7 տոկոս, յերկրաբանները՝ 21,2 տո-կոս, գունավոր մետաղուրդիայի մետաղուրդները՝ 20 տո-կոս, ճարտարապետները՝ 18,9 տոկոս։

իրենց մեծամասնությամբ դրանք բանվոր գասակարդեն մասն իրենց բառիկեն:

շարքերից յոլով սաւէւ ինչպես տեսնում եք, ընկերներ, նոր մարդիկ փոխարինեցին կաղըերի այն մասը, վորը պարզապես հարմարված չեր քաղաքականապես և կուլտուրապես աճած բանվոր գառակարդի ղեկավարման նոր ժամանակաշրջանի համար, ստախանովյան շարժման պայմաններում արտադրական պրոցեսի ղեկավարման համար: Այդ նույնիսկ ազնիով մարդկանց մի ժաման ընկալ ազգեցության տակ, ընդորինակեց այն տնտեսավարների սովորությունները և ունակությունները, զորոնք խճաշիլ ելին վնասարարական դործերի մեջ: Տրոցկիստական-պյատառակույյան-զինովեական-բուխարինական բանդիտներին հաջողվեց լրտեսության մեջ ներդրավել տնտեսավարների մի մասին:

Կուսակցությունը, պետությունը և սոցիալիստական տնտեսությունը մաքրվեցին դրանցից։ Վորոշ ողակներում հարկ յեղավ հանել մի քանի շերտ։ Յերկաթուղային տրանսպորտի որինակով, այդ ամենաբարդ մեքենայի, վորը պետք է աշխատի կենտրոնացված՝ ինչպես ժամացույցը, յերեսում է, թե ինչպես յերկաթուղային տրանսպորտը, հենվելով իր առաջավոր մարդկանց վրա, նոր կադրերի վրա, ոկտես աշխատել ավելի լավ ու ավելի կուլտուրականորեն։

Մենք այժմ ունենք կադրեր, վորոնք կկատարեն կուսակցության, կենտրոմի, Խորհրդային իշխանության ամեն մի խնդիրը, ընկեր Ստալինի ամեն մի խնդիրը։

Այժմ մեր հոգատարությունը պետք է լինի այն, վորակելի այդ նոր կադրերը տիրապետեն բոլցելիմին։

Կոտրերի ընտրության մեջ մեր կուսակցության կենտրոն անշեղորեն կենսագործում եր ընկեր Ստալինի տված գիծը։ Նոր մարդկի ընտրվում էին գործունակ հատկությունները քաղաքականի հետ զուգակցելու հիման վրա։ Այդ պետք է լինի աշխատանքի մեջ տնտեսական դեկալարների կատարած աշխատանքի բոլցելիյան վոճի կարևորագույն դիմը, այսինքն՝ բոլցելիորեն ընտրել աշխատողներին վոչ միայն ըստ գործունակ հատկությունների, այլև ըստ քաղաքական հատկանիւմ։

Կադրերի ընտրության Ստալինյան քաղաքականության և պրակտիկայի հիմքում գրված են միայն կուսակցության և պետության շահերը։ Ահա կուսակցության մեր կենտրոմի ամբողջ աշխատանքի անկունաքարը։ Գետության շահերը՝ մարդկանց ընտրությունը՝ կապված թշնամիների շախճախտման և նոր մարդկանց բարձրացման հետ—այդ գլխավորն ու հիմնականն է, վորը վճռում եր կադրերի ընտրության գործը։ Մենք պետք են կադրերի ընտրության գծով կատարվող մեր հետագա աշխատանքում գործարար սկզբունքը կապակցենք քաղաքական սկզբունքի հետ։ Խսկական բոլցելիկավար դառնալու համար պետք և տիրապետել բոլցելիկ մին։ Յերբ հայտաբերվեց թշնամիների սոոր աշխատանքը, ընկեր Ստալինը մեր խորհրդային կադրերի համար առաջ քաշեց բոլցելիկին տիրապետելու լոգունդը։ Այդ նշանակում էր, վոր աելանիկային տիրապետելը քիչ է, ինչեներ, անտե-

ռագետ գառնալը քիչ է, հարկավոր ե լինել քաղաքականապես կողմանակած մարդ, վորպեսզի քո ինժեներությունն ի զուր չկարչի, վորպեսզի թշնամին քեզ չմոլորեցնի, վորպեսզի նա չփչացնի քո աշխատանքը։ Բաղհակառակը, վորպեսզի դու ինքը կարողանաս նրան ժամանակին ճանաչել, ժամանակին մերկացնել։

Տիրապետել բոլցելիկմին—այդ չի նշանակում լինել սոսկ քաղաքականապես դրագետ մարդ։ Հակսուակորդն ել և լինում դրագետ մարդ։ Հետեապես, այստեղ խոսքը քաղաքական պրոցեսների խորը ըմբռնման մասին է, թաքուն տրամադրությունները նկատելու հմտության մասին, դասակարգային պայքարի որենքներն ըմբռնելու, մեր այն խնդիրներն ըմբռնելու մասին, վորոնք պահանջում են մեր ճանապարհին ծառացած դժվարությունները հաղթահարելու հմտություն, լինել միշտ ամուր, վստահ, հրճվալից կերպով, յեռանդուն աշխատող բոլցելիկ։

Այս տեսակետից իրոք վիթխարի յե այն աշխատանքը, վոր մեր կուսակցությունը, ընկեր Ստալինի անմիջական դեկավարությունը, վերջին յերկու տարվա ընթացքում կատարում ե կուսակցում աշխատանքի բարելավման, պրոպագանդայի, մամուլի բարձրացման ու բարելավման և հատկապես կուսակցության պատմության հիանալի դասագրքի հրատարակման ուղղությամբ։

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՑ
ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԲՈՐՉՔԱԴԱՐԱՎՈՒՄՆԵՐ ՖՈԶԲՆ ԱՆՁՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ՊԱՅՑՔԱՐԵԼՈՒ ՄԵԾ ԾՐԱԳԻՐ Ե

Այս նոր, թեորիական պրոբլեմները, վորոնք Համել(բ)կ XVIII համագումարում իր հաշվետվության մեջ գրեց ընկեր Ստալինը—պետք ե ամենալիթիարի դեր խաղան, և կիսազան, մեր մէլլիոնալոր մարդկանց՝ առաջին հերթին հարցուր—հաղարավոր տնտեսական աշխատողների, զատիաբակության գործում։

Գետության հարցը, վոր ընկեր Ստալինը տեսականութեն ծավալեց այս համագումարում, բացառիկ մեծ նշանակություն ունի։ Գետք ե ուղղակի ասել, վոր անդասակարգ սոցիալիստական հասարակության մասին զբույթը շատեր

ըմբռնել եյին այնպես, թե այժմ արդեն վորեւ վտանգ չկա և, հետեարար, զգաստության հարցն իրը թե սուր հարց չե հանդիսանում: Նույնիսկ ընկ. կիրովի չարանենդ սպանությունից հետո և կուսակցության Կենտկոմի նամակից հետո, վորը նախադպուշացնում եր զգաստությունը կորցնելու մասին, զգաստության այդ կորուստը շարունակվեց: Անուստարակույս, զբա արմատներն ընկած են սոցիալիզմի յերկրի ապրած նոր ետապը չհասկանալու մեջ, կապիտալիստական շրջապատումից սոցիալիզմի յերկրի համար բղխող վտանգը և այդ վտանգի դեմ պայքարելու գործում պետության դերը չհասկանալու մեջ:

Պրոլետարական պետության հարցի իր դրումով՝ կապիտալիստական շրջապատման պայմաններում, յերբ սոցիալիզմը հաղթել ե մեկ յերկրում, ընկեր Ստալինը նոր աստիճանի յե բարձրացնում պրոլետարական պետության թեորիան:

Այժմ պարզ ե, վոր ներկայումս, յերբ մենք թևակոխել ենք սոցիալիզմից կոմունիզմի բարձրագույն Փաղին անցներու շրջանը, մեզ հարկավոր ե ուժեղ խորհրդային պետություն, հարկավոր ե ուժեղ, պանծալի խորհրդային հետախուզություն, մեզ հարկավոր ե ուժեղ, պանծալի Կարմիր բանակ, մեզ հարկավոր ե շարունակել մեր Խորհրդային Միության տնտեսական, քաղաքական, պաշտպանական հողարածության հետագա ամբապնումը: Յես կարծում եմ, ընկերներ, վոր Կենտկոմի հաշվետվությունը մեզ ցույց տվեց, վոր մենք կարող ենք վստահ լինել մեր պետության համար—նա գտնվում ե Ստալինյան վստահելի ձեռքերում: (Բուռն ծափահարություններ):

Ընկերներ: Յեթե կուսակցության ԽVI և XVII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում մենք կապիտալիստական դառակարգերի մնացորդների դեմ մղվող պայքարում Հիմնականում կառուցեցինք սոցիալիզմը, ապա կուսակցության XVII և XVIII համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում մենք, բազմապատկերով սոցիալիզմի հաղթանակներն եկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում, ուժեղացրինք սոցիալիզմի քաղաքական հողությունը և, վոր դիմավորներ, պահպանական այնպիս այսպիս ամրող պատմական դարաշրջանի՝ 10—15 տարվա համար: Այդ բոլշևիկյան մեծ գործերի իրոք մեծ ծրագիր ե:

Եթե կապիտալիստական թշնամու վոտնձգություններից, թշնամի, վորը գործում եր իր գործակալների՝ արոցիկստական-բուլիստարինական լրտեսների ու դիվերտաների մեջոցով:

XVII և XVIII համագումարների միջև ընկած հաշվետուժամանակաշրջանում, ջախջախելով լրտեսներին ու դիվերտանտներին, մեր կուսակցությունը նոր պայմաններում առաջին կործանիչ հարվածը հասցրեց կապիտալիստական շրջապատմանը:

Յեթե կուսակցության XVII համագումարը կոչվել եր հաղթողների համագումար, ապա XVIII համագումարը հաղթողների համագումար և կրկնակի:

Կուսակցությունը համագումարը և յեկել նրա քաղաքականությունը բազմամիլիոն ժողովրդի կողմից մեծ ստուգման յենթարկվելուց հետո: Այդպիսի ստուգում հանդիսացան Գերագույն Խորհրդի ընտրությունները նոր, Ստալինյան Սահմանադրության հիման վրա: Սոցիալիզմի հաղթանակներն իրենց վառ արտահայտությունը գտան Ստալինյան Սահմանադրության մեջ և ընտրություններում մեր ժողովրդի համախմբման մեջ:

Գերագույն Խորհրդի ընտրություններով բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները կարծէք մասնակցեցին մեք կուսակցության կենտկոմի հաշվետվության վերաբերյալ մտքերի փոխանակությանը: Մեծ Խորհրդային Միության ժողովուրդները, ինչպես յերեք, բարձր են գնահատում, սիրում են իրենց կուսակցությունը, կուսակցությունը, վորն եր գործունեյությունն սկսելով խիզախ հեղափոխականների ընդհատակյա մի փոքրիկ խմբով՝ կազմակերպված լենինի ու Ստալինի կողմից, բարձրացրեց ժողովրդական մեծ, զոր ուժը՝ ըրացներ գործելու և կոմունիստական նոր կյանք կառուցելու համար:

Այս համագումարում ընկեր Ստալինը ամեց պայքարի նոր ծրագիր՝ մի ամրող պատմական դարաշրջանի՝ 10—15 տարվա համար: Այդ բոլշևիկյան մեծ գործերի իրոք մեծ ծրագիր ե:

Բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարը, լույս կենտկոմի հաշվետվությունը, անտարակույս, հավանությով կուսակցության կուսակցության պահպանական այն, պաշտպանե-

թյուն կտա իր կենտկոմի գործունեյությանը։ Ըսկեր Ստա-
լինի գեկուցումը կղառնա մեր պանծալի կուսակցության
մեծ գործերի մեծ ծրագիրը՝ սոցիալիզմից կոմունիզմի
բարձրագույն Փաղին անցնելու պատմական նոր ժամանա-
կաշրջանում։ (Բուռն, յերկարատև ծափահարություններ)։

Մեր խնդիրն ե՝ կատարել այդ ծրագիրը:

Լենինիք-Սատլինի կուսակցությունը, վորն անցել եւ աշխատավորներին ճնշողների դեմ մղված պայքարի մեծ ուղի, կուսակցություն, վորը ջախջախել եւ բանվոր դասակարգի ներսում գտնվող դավաճաններին, խորտակել եւ ցարական կարգերը, կապիտալիստներին, կուսակցություն, վորը 1917 թվի Հոկտեմբերին սոցիալիզմի Կարմիր Դրոշը կանգնեցրեց յերկրագնդի մեկ վեցերորդ մասում, կուսակցություն, վորը մեծ հաղթանակներ ձեռք բերեց քաղաքացիական սրատերազմի ճակատներում գեներալների և 14 ինտերվենտ-պետությունների դեմ մղված պայքարում, կուսակցություն, վորը վոչնչացրեց կուլտուրյանը, լիկվիդացիայի յենթարկեց կապիտալիստական տարրերին, վոչնչացրեց լրտեսների ու դիվերսանտների բները, կուսակցություն, վորը կառուցեց սոցիալիզմը, —այդպիսի կուսակցությունը պատվով կկատարի մեր յերկրում կոմունիզմ կառուցելու մեծ աշխատանքների այս նոր մեծ ծրագիրը: (Բուռն ծափակարություններ):

Բոլցելիներն ապացուցեցին, վոր կարողանում են պրակտիկայում իրականացնել մարդկության պատմության մեջ չտեսնված մեծ գործեր։ Ամբողջ աշխարհը կրկին անգամ է համոզվի դժանում, յերբ մենք հաջորդ համագումարում կամ փոփենք կուսակցության ԽՎԻ համագումարում ընդունված Ստալինյան մեծ ծրագրի իրականացման արդյունքները։ Դրա յերաշխիքն և մեր կուսակցության կենտրոնական Կոմիտեյի Ստալինյան, և անձամբ ընկեր Ստալինի հզոր ղեկավարությունը։ (Բոլորը վոտքի յեն կանգնում։ Բուռն, յերկարաւուն ծախահարություններ, վորոնք վերածվում են ովացիայի՝ ի պատիվ թեկեր Ստալինի)։

ԿԵՐԵՎ մԵՐ Կուսակցության XVIII Համագումարը:

Կեցցե՞ բոլշևիկների մեր պանծալի Հղոր կուսակցու-

թյունը—կռմռնիստական հասարակության կառուցման
վճռական ռուժը:

Կեցցե՛ կոմունիզմի համար պայքարելու ծրագրի ստեղծ-
ծողը և նրա իբրականացման հանձնարկեղ զեկավարը, մեր
հարազատ, սիրելի ընկեր Ստալինը: (Բոլոր վորտի յեն
կանգնում: Բուռն, յերկարան ծափակարություններ, վո-
րոնիք վերածվում են ովացիայի ի պատիվ ընկեր Ստալինի:
Թագավորչություններ՝ «Ռուս, Մեծ Ստալինին ուռա»):



ԹՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորիդային պետության տնտեսական հզորության ամբարձումը

Եջ

10

Արգյունաբերության աճումը և ընկեր Ստալինի կողմից

11

արված խնդրի կատարումը—տնտեսագիտական առաջ անցնել

17

կազմականացնելու գլխավոր յնթկրներից

31

Արտագրական կարուղությունների լիակտար յուրա-

ցումն ու ավելացումը կտրհորակույն խնդիր և

գանձելանության արդյունաբերության հետագա վերելքի

մասին

Աժխարդյունաբերության բարձրացման մտախն

31

Նախարդյունաբերության բարձրացման մտախն

41

Յերկարթության արանսպորտը կանգնեց ժողովրդական տնտե-

պարյան

առաջավոր նյուղերի շարքերում

48

Ենրկաթուղային արանսպորտի աշխատանքի հետագա

57

բարելավումը

64

Ենրկաթուղայինների սարեկեցության վերելքը և քառա-

քական աշխատանքը յնրկաթուղային արանսպորտում

71

Կատարման սուուզման և կադրերի ընտրության մասին

77

Բարեկեր Ստալինի գելուցումը սոցիալիզմից կոմունիզմի բարձ-

րմէկեր Ստալինի անցնելու համար պայքարելու մեծ ծրագիր և

Հայերն թարգման, խմբագիր Ա. Վարդանյան

Տեխն. խմբագիր Հ. Մանվելյան

Սրբազրիչ Վ. Զիգեզյան

Կոնտրոլ սրբազրիչ Լ. Սրովյան

Դրամիսի միակար № 8—1721, հրատ. № 678

Գիտություն № 87, տիրած 10.000

Հանձնված և արտադրության 27/IV 1939 թ.

Արտադրություն և արտադրելու 19/V 1939 թ.

Գինը 75 կ.

Գիտհատ—Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,

Երևան, Ալլագիրյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0210861

272

Зд. 181

Чтврт 75 ч.

Л. КАГАНОВИЧ
РЕЧЬ НА XVIII СЪЕЗДЕ
ВКП(б)

Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939